# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

35ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 29 (1729) ՇԱԲԱԹ, ՕԳՈՍՏՈՍ 1, 2015
VOLUME 35, NO. 29 (1729) SATURDAY, AUGUST 1, 2015

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## Գրիգոր-Պետրոս Ի. Կապրոյեան Նորընտիր Պատրիարք Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ

Հայ Կաթողիկէ Եպիսկոպոսական Սինհոդոսը Յուլիս 25-ին աւարտեց իր աշ-խատանքները՝ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ 20-րդ Կաթողիկոս Պատրիարքի ընտրութեամբ: Սինհոդոսի 15 եպիսկոպոսները 12 օր տեւած ընտրական նիստերէ ետք, Նոր Պատրիարք ընտրեցին Արհ. Տ. Գրիգոր եպս. Կապրոյեանը, որ ընդունեց ստանձնել Կաթողիկէ Հայոց Հայրապետի բարձրագոյն պաշտօնը՝ Գրիգոր Պետրոս Ի. անունով: Ան այսուհետեւ կը կոչուի Գրիգոր-Պետրոս Ի. Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց:

Սինհոդոսի մասնակից Սրբազան հայրերուն անունով Լիբանանի Զմմառու Վանքին մէջ տեղի ունեցած մամլոյ ասուլիս մը ընթացքին այս մասին յայտարարեցին արաբերէնով Աղեքսանդրիոյ առաջնորդ Գրիգոր Եպս. Գուսան, իսկ հայերէնով՝ ԱՄՆի հայ կաթողիկէ թեմի առաջնորդ Միքայէլ Եպս. Մուրատեան:

Նորընտիր Կաթողիկոս Պատրիարքը ծնած է 14 Նոյեմբեր 1934ին, Հալէպ: Նախնական ուսումը ստացած է Զմմառի դպրանոցին մէջ, ապա ուսումը շարունակած Հռոմի Լեւոնեան վարժարանին մէջ եւ աւարտած Հռոմի Գրիգորեան համալսարանը:

Քահանայ ձեռնադրուած է 28 Մարտ 1959ին: 1962-1969 թուականներուն վարած է Մեսրոպեան վարժարանի տեսուչի, իսկ 1969-էն 1975՝ Զմմառու դպրեվանքի տեսուչի եւ միաժամանակ, Զմմառու վանքի գործադիր խորհուրդի քարտուղարի պաշտօնները:

1976-ին Սուրբ Աթոռի կողմէ նշանակուած է Ֆրանսայի հայ կաթողիկէներու առաջնորդ եւ եպիսկոպոս ձեռնադրուած է 13 Փետրուար 1977-ին, Պէյրութի Սբ. Փրկիչ եկեղեցւոյ մէջ՝ ձեռամբ Երաշնորհ Հմայեակ Պետրոս 17-րդ Կէտիկեան Կաթողիկոս Պատրիարքի:



Նորընտիր Պատրիարք
Գրիգոր-Պետրոս Ի. Կապրոյեան

25 Յուլիս 2015-էն Ֆրանսայի հայ կաթողիկէներու արդէն հրաժարեալ առաջնորդ Արհ. Գրիգոր եպս. Կապրոյեան կը վարէր Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Պատրիարքական կառավարիչի պաշտօնը եւ կազմակերպած Երանաշնորհ Տ. Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքի թաղման արարողութիւնը, ապա Նոր Պատրիարքի ընտրութիւնները:

Ամենապատիւ Տ. Գրիգոր Պետրոս Ի. Կաթողիկոս Պատրիարքի գահակալութեան արարողութիւնը նախատեսուած է կատարել 9 Օգոստոս 2015-ին, Զմմառի մայրավանքին մէջ:

## Սփիւռքի Նախարարը Խորհուրդ Կու Տայ՝ Հեռանալու Հալէպէն

«Սուրիայում իրավիճակն այսօր ծայրայեղ վատ է», - «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին ըսած է սփիւռքի Նախարար Հրանոյշ Յակոբեանը՝ այդուհանդերձ աւելացնելով, որ «Հայաստանն այսօր չի կարող կազմակերպուած ձեւով տարհանել հայերին»: Ըստ նախարարի, ադ քայլը վտանգաւոր է:

«Ընդհանրապէս, որպէս պետական տարհանում, որեւէ երկիր, որեւէ ձեւով դա չի կազմակերպում, այդ թւում՝ նաեւ Հայաստանը, որովհետեւ տարհանել, նշանակում է յայտարարել եւ բոլոր թշնամի ու հրէշաւոր տարրերին ասել՝ «այ, մենք այստեղ կուտակուել ենք, խնդրեմ՝ ռումբերն ուղարկէք այս ուղղութեամբ»: Ե՛ւ քաղաքական, եւ անվտանգութեան առումով, չի կարելի նման բան յայտարարել», - ըսած է սփիւռքի նախարարը:

Հրանոյշ Յակոբեան մի քանի օրեր առաջ վերադարձած է Լիբանանէն: Այնտեղ հոգեւոր առաջնորդներու հետ հանդիպումներու ժամանակ քննարկուած են Սուրիոյ մէջ տիրող իրավիճակը:

Նախարարը «Ազատութեան» ըսած է, որ այս պահուն աւելորդ է խօսիլ աւերուած երկրի մէջ խոշոր համայնք պահելու մասին: Յակոբեան նաեւ աւելցուցած է, որ այնտեղ հիմնականին մէջ մնացած են մարդիկ, որոնք կը փորձեն պաշտպանել պատմամշակութային արժէքները:



Սփիւռքի Նախարար
Հրանոյշ Յակոբեան

«Եւ մեր խօսակցութեան արդիւնքում էլ մենք ազդակներ ենք ուղարկում մեր հայրենակիցներին, որ տարբեր ձեւերով նրանք պէտք է հեռանան, որովհետեւ վտանգը շատ մեծ է», - ըսած է Յակոբեան:

Հրանոյշ Յակոբեանի հաւաստմամբ՝ սուրիահայերը, որ երկրի մէջ ալ յայտնուին, չեն ստանար այնպիսի օգնութիւն, ինչ որ այսօր անոնց կ՚առաջարկէ Հայաստանը: Նախարարի պնդումով, Հայաստանի իշխանութիւնները իր կարելիութեան սահմաններուն մէջ կ՚օգնէ պատերազմի գօտիին մէջ մնացած հայերուն եւ Հայաստան տեղափոխուածներուն:

## Պելճիքայի Հայ Համայնքը Դժգոհ է Ցեղասպանութեան Վերաբերեալ Ընդունուած Որոշումէն

Մայիսի 23-ին Պելճիքայի խորհրդարանը պաշտօնապէս ճանչցաւ Հայոց Ցեղասպանութիւնը:

Պելճիքական մամուլը սակայն կը յայտնէ, որ տեղւոյն հայ համայնքը դժգոհ է Խորհրդարանի ընդունած բանաձեւի յատկապէս երկրորդ կէտէն, որ կոչ կ՚ընէ երկրի կառավարութեանը «ճանչնալ, որ այսօրուայ Թուրքիան չի կրնար պատմական եւ բարոյական պատասխանատուութիւն կրել Օսմանեան կայսրութենէն ներս հայերու ողբերգութեան համար»:

Հայկական համայնքի ներկայացուցիչները յայտարարած են, որ թրքական իշխանութիւնները հերքելով Ցեղասպանութիւնը եւ շարունակելով փառաբանել կազմակերպիչները, կը դառնան Օսմանեան կայսրութեան գործողութիւններու ժառանգորդները եւ բարոյական պատասխանատուութիւն կրողները:

## Ֆրանսայի Կառավարութիւնը Արգիլած է Ղարաբաղի Հետ Ուղղակի Գործակցութիւնը

Ֆրանսայի կառավարութիւնը արգիլած է տեղական իշխանութիւններուն ապակեդրոն համագործակցութիւն ունենալ Լեռնային Ղարաբաղի հետ՝ առանց ենթարկուելու Ֆրանսայի ստանձնած միջազգային պարտաւորութիւններուն:

Յուլիս 2-ի թուակիր պաշտօնական գրութիւն մը ուղարկուած է տեղական իշխանութիւններուն, ստորագրուած արտաքին գործոց նախարար Լորան Ֆապուսի եւ ներքին գործոց նախարար Պերնար Սազէնովի կողմէ, ըսելով որ, վերջին ամիսներուն, տեղական մարմիններ համագործակցութեան պայմանագիրներ կնքած են կառոյցներու հետ, որոնք չեն ճանչցուած Ֆրանսայի կառավարութեան կողմէ:

Պաշտօնական գրութիւնը կը շեշտէ որ, բոլոր տեսակի համագործակցութիւնները պէտք է նկատի առնեն Ֆրանսայի միջազգային

Liberté • Égalité • Fraternité
RÉPUBLIQUE FRANÇAISE

պարտաւորութիւնները: Յատկապէս, տեղական իշխանութիւնները չեն կրնար համաձայնագրեր ստորագրել օտար պետութիւններու հետ, ներառեալ Խրիմի եւ Լեռնային Ղարաբաղի հետ, որոնք պաշտօնապէս չեն ճանչցուած Ֆրանսայի կողմէ:

Գրութիւնը կը յիշեցնէ որ, տեղական իշխախութիւնները պարտաւոր են տեղեկութիւններ փոխանցել Ապակեդրոն Համագործակցութեան Ազգային Յանձնաժողովին, իրենց արտաքին գործունէութեան վերաբերեալ:

## Հնչակեան Երիտասարդական Բանակում Հայաստանի Մէջ

Այս օրերուն, աշխարհի տարբեր շրջաններէն Հայաստան կը ժամանեն շուրջ 300 երիտասարդներ, մասնակցելու համար Օգոստոսի 3-էն 10-ի մինչեւ Ծաղկաձորի մէջ տեղի ունենալիք Հնչակեան երիտասարդական բանակումին:

Այս տարուայ բանակումը նուիրուած է Հնչակեան Քսան Կախաղաններու 100-ամեակին:

Ծաղկաձորի բանակվայրին մէջ անոնց համար նախատեսուած է ազգային, մարզական, ընկերային եւ մշակութային ճոխ յայտագիր:

Օգոստոսի 6-ին անոնք Երեւան Յակոբ Պարոնեանի անուան թատերասրահին մէջ, ներկայ պիտի գտնուին Հնչակեան Քսան Նահատակներու 100-ամեակի եզրափակիչ հանդիսութեան:

Երիտասարդները առիթ պիտի ունենան ծանօթանալու նաեւ մայր Հայրենիքի պատմական եւ տեսարժան վայրերուն:

Գալիֆորնիոյ երիտասարդական պատուիրակութիւնը Երեւան կը մեկնի Օգոստոս 1-ին:

### «ՄԱՍԻՍ»Ի ՅԱՋՈՐԴ ԹԻՒԸ

Տարեկան արձակուրդի բերումով «Մասիս» լոյս չի տեսներ Օգոստոս 8-ին եւ 15-ին, այնուհետեւ մեր յառաջիկայ թիւը լոյս կը տեսնէ Շաբաթ, Օգոստոս 22- ին:

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Սերժ Սարգսեանի Իշխանափոխութեան Ծրագիրը

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*Դիլիջանում հանդիպելով «Լոյս» հիմնադրամի աջակցութեամբ արտերկրում սովորող երիտասարդներին, Սերժ Սարգսեանը յայտարարել է, որ Հայաստանին անհրաժեշտ են բանիմաց, կրթուած, բարձրակարգ մասնագէտները եւ 10-15 տարի յետոյ երկիրը ղեկավարելու են այդ երիտասարդները:*

*Փաստօրէն, Սերժ Սարգսեանը յայտարարում է, որ 10-15 տարի յետոյ Հայաստանում լինելու է իշխանափոխութիւն: Բանն այն է, որ Հայաստանում իշխանափոխութիւն պէտք է լինի, որպէսզի բանիմաց, գրագէտ, կիրթ, բարձրակարգ մասնագէտ հանդիսացող, նորարար, արդիական մտածողութեան տէր երիտասարդները ղեկավարեն պետութիւնը:*

*Եթէ Հայաստանի ներկայիս իշխող համակարգը չփոխուի, ապա այդօրինակ երիտասարդների առաքելութեան առաւելագոյնը կը լինի ընդամէնը ներկայիս իշխող համակարգին մասնագիտական բարձր որակի ծառայութեան մատուցելը՝ պետական ապարատում կամ այդ համակարգի բարձրաստիճան պաշտօնեաների, ղեկավարների մասնաւոր բիզնեսներում:*

*Որովհետեւ, ներկայիս համակարգի պայմաններում այդօրինակ երիտասարդութիւնը պետութեան ղեկավարման քաղաքական յայտ ներկայացնելու դէպքում անմիջապէս կ'որակուի որպէս «գործակալ», որին արեւմտեան հեղինակաւոր ուսումնական հաստատութիւնների քօղի տակ պատրաստել են Հայաստանում «գունաւոր յեղափոխութիւն» անելու համար:*

*Հայաստանում ներկայումս շատ երիտասարդներ, որոնք կրթութիւն են ստացել արտերկրի հեղինակաւոր հաստատութիւններում՝ իհարկէ առանց «Լոյս» հիմնադրամի աջակցութեան, հանդիսանում են քաղաքացիական պայքարի աշխոյժ մասնակիցներ, նախաձեռնողներ: Նրանք պայքարում են երկրում արժեհամակարգ, մտածողութիւն, քաղաքացու տեսակ, աւելի շուտ բնակչից քաղաքացի կերտելու ուղղութեամբ: Այդ երիտասարդները հենց արժանանում են «գործակալական» որակումների, նրանց «գրանտակեր» են ասում եւ այլն:*

*Ինչպէ՞ս են «Լոյս» հիմնադրամով կրթութիւն ստացած երիտասարդները ստանձնելու երկրի կառավարումը: Թէ՞ իշխանութիւնը նրանց կ'առաջարկի գործարք՝ ընդունել ներհամակարգային պայմանները եւ ինտեգրուել, այնպէս, ինչպէս օրինակ շատ ՀՀԿ երիտկարիերիստներ: Այսինքն, դէմքերը ի վերջոյ մի օր փոխուելու են, իսկ այսօր ղեկավարողների որդիները եւ դուստրերը կարող են չբաւականացնել բոլոր պաշտօնների համար: Այնպէս որ կադրային ռեզեր պէտք է, բայց համակարգային տրամաբանութեան շրջանակում:*

*Հայաստանի ներկայիս իշխող համակարգի համար պահանջուած են կոմֆորմիստ երիտասարդներ, որոնց համար կարեւորը կարիերան է, դրա նիւթական արդիւնքը, իսկ սկզբունքները, արժէքները, գաղափարները նոյնիսկ չորրորդական պլանում չեն:*

*Այդ դէպքում ինչ տարբերութիւն, թէ ով է ղեկավարում:*

*Միեւնոյն ժամանակ, արտերկրում կրթութիւն ստացած, բարձր մակարդակի մասնագէտ հանդիսացող, նորարար երիտասարդի առաջին յատկանիշը պէտք է լինի անհանդուրժողութիւնը Հայաստանի իշխող համակարգի եւ իշխող արժէքային-մտածողութեան հանդէպ: Ընդ որում, դա պէտք է լինի բնական անհանդուրժողութիւն: Դա ինչ որ իմաստով նոյնիսկ ինդիկատոր է, որովհետեւ եթէ Հայաստանում իշխող համակարգը երիտասարդի մօտ չի առաջացնում այդ անհանդուրժողութիւնը, ուրեմն այդ երիտասարդի մօտ «ինչ որ բան սխալ» է, ինչպէս կ'ասէր հայ մեծ գրողը:*

*Հետեւաբար, Հայաստանի ներկայիս իշխող համակարգն ու իրապէս արդիական, արժեհամակարգային առումով արդիական, նոր կերպով մտածող երիտասարդութիւնն անհամատեղելի են: Եւ եթէ այդ երիտասարդութիւնը պէտք է ոչ թէ լոկ նոր դէմքով, այլ նոր արժէքներով ու մտածողութեամբ ղեկավարի պետութիւնը, ապա դա հնարաւոր է միայն ներկայիս իշխող համակարգի փոփոխութիւնից յետոյ:*

*Մինչդեռ ներկայումս տեղի են ունենում ներիշխանական գործընթացներ, մասնաւորապէս Սահմանադրութեան փոփոխութեան տեսքով, որոնք կարծէք թէ միտուած են այդ իշխող համակարգի խաղաղ գոյակցութեան նոր կանոնակարգի հաստատմանը եւ ըստ այդմ համակարգի իշխանութեան գրեթէ յաւերժացմանը:*

*Տեսականում չի բացառւում իհարկէ, որ Սերժ Սարգսեանն ունի ինչ որ խորամանկ ծրագիր առաջիկայ 10-15 տարիների համար, որն իրագործելու շնորհիւ կանի իշխանափոխութիւն, պետութեան ղեկավարումը յանձնելով բառի բուն եւ պատկերաւոր իմաստով լուսաւոր երիտասարդների: Բայց, առայժմ իհարկէ, գործնականում, Սերժ Սարգսեանն ու նրա ղեկավարած համակարգը ապահովում են «ոսկէ երիտասարդութեան» ապագան, օժտելով անպատժելիութեամբ, գործարար գերյաջող յատկանիշներով եւ արդէն առնուազն տեղական իշխանութեամբ: Հետաքրքիր է, այդ երիտասարդները գիտե՞ն, որ 10-15 տարի յետոյ չեն ղեկավարելու այն, ինչ այսօր ղեկավարում են իրենց հայրերը:*

*«ԼՐԱԳԻՐ»*

# Հասարակութիւնը Աքցանը Ձեռքի՞ն, Թէ՞ Աքցանի Մէջ

*ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ*

*Սահմանադրական փոփոխութիւնները Հայաստանում տեղի են ունենում հասարակական լուռ կոնսենսուսի պայմաններում: Միայն թէ այդ կոնսենսուսը ոչ թէ Սահմանադրութեան նախագծի բովանդակութեան շուրջ է, որը ներկայացրել են իշխանութիւնները, այլ այն հարցի, որ սահմանադրական բարեփոխումները ոչ մի կապ չունեն Հայաստանի եւ հասարակութեան կեանքի բովանդակութեան հետ: Այս առումով հասարակական լուռ կոնսենսուսը շատ յստակ է:*

**Սահմանադրական բարեփոխումները ոչ մի կապ չունեն Հայաստանի եւ հասարակութեան կեանքի բովանդակութեան հետ: Այս առումով հասարակական լուռ կոնսենսուսը շատ յստակ է**

*Սրան զուգահեռ սահմանադրական բարեփոխումների իշխանական նախաձեռնութեանը դէմ հանդէս եկող ուժերը ըստ էութեան փորձում են ձեւաւորել կոնսենսուս բոյկոտի հարցում՝ ակնկալելով, որ կը ստացուի մարդկանց համախմբել բոյկոտի գաղափարի շուրջ եւ այդպիսով նախաձեռնել մոբիլիզացիա սահմանադրական փոփոխութիւնների շուրջ:*

*Ընդ որում, հետաքրքրականն այն է, որ այդ մտադրութեան հարցում առանցքային դեր է խաղում այն, որ հանրութեանը սահմանադրական բարեփոխումները ներկայացւում են որպէս իրական եւ կարեւոր խնդիրներից շեղելու փորձ: Եւ սա իսկապէս իրականութիւնն է, քանի որ Հայաստանի այսօրուայ խնդիրները որեւէ կերպ կապուած չեն այն փոփոխութիւնների հետ, որ առաջարկում են իշխանութիւնները: Դրանց հետ կապուած են միգուցէ իշխանութիւնների խնդիրները, ինչը, սակայն, հասարակութեանը որեւէ կերպ չպէտք է յուզի:*

*Բայց այս ամէնով հանդերձ՝ սահմանադրական բոյկոտի գաղափարն ինքնին հասարակութեանը իրական խնդիրներից եւ անելիքներից շեղելու մէկ այլ փորձ է՝ այսպէս ասած, հայելային հակապատկերի տրամաբանութեամբ: Ըստ էութեան, ի՞նչ է ստացւում. ստացւում է, որ իշխանութիւնները հասարակութեանը փորձ են անում իրական խնդիրներից եւ դրանց շուրջ քննարկումներից շեղել սահմանադրական բարեփոխումների կեղծ օրակարգով, իսկ դրան դէմ հանդէս եկող ուժերն էլ իրաւացիօրէն մեղադրելով իշխանութիւններին այդ շեղելու փորձերի մէջ՝ ըստ էութեան իրենք էլ հասարակութեանն իրական անելիքների շուրջ քննարկումներից ու մտորումներից շեղում են բոյկոտի գաղափարով, որն աւելի բնական չէ որպէս օրակարգ, քան բարեփոխումներ ասուածը:*

*Ստացւում է, որ հասարակութեանը երկուստեք շեղում են, ինչքան էլ բոյկոտի գաղափարը լինի ազնիւ: Վերջին հաշուով՝ հասարակութիւնն իշխող համակարգի դէմ պայքարի առումով կարիք ունի մեթոդաբանական լուրջ նորարարութիւնների, գաղափարական նորարարութիւնների: Եւ սրանց շրջանակում բոյկոտը՝ որպէս մեխանիզմ, ըստ էութեան, գոնէ առայժմ անհասկանալի է եւ չբացատրուած, թէ, օրինակ, բոյկոտն ինչպէս է օգնելու հասարակական կարեւոր խնդիրների լուծմանը:*

*Եւ եթէ սա չի բացատրւում հանգամանալից, եթէ սա չի ներկայացւում որպէս մեխանիզմ, ըստ էութեան ստացւում է իրավիճակ, երբ հասարակութիւնը վերցւում է սահմանադրական դէմ եւ կողմ աքցանի մէջ, որի ոչ մի կողմը կապ չունի իրական խնդիրների, անելիքների եւ մարտահրաւէրների հետ՝ եւ ներքին, եւ արտաքին:*

*«ԺԱՄԱՆԱԿ»*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**

1060 North Allen Ave
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով հեռաձայնել՝
(626) 398-0506

**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# Ընդդիմադիրները Հնարաւոր Են Համարում Սահմանադրութեան Փոփոխութիւնների Դէմ Միասնական Պայքարը

Այս պահին ընդդիմադիր դաշտում տեղի են ունենում որոշակի նախնական խորհրդակցութիւններ՝ սահմանադրական փոփոխութիւնների դէմ միասնական ճակատ կազմելու նպատակով, ասում է ընդդիմադիր «Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը՝ գերծ մնալով, այդուհանդերձ, դրանք պաշտօնական կոնսուլտացիաներ անուանելուց:

«Մինչեւ Օգոստոսի կէս, Օգոստոսի վերջ կը լինեն այդ կոնսուլտացիաները, դրանից յետոյ արդէն միասնական ճակատով հանդէս կը գանք: Ես այդ կարծիքն ունեմ: Հնարաւոր են շտկումներ, որովհետեւ իմ կարծիքը շատ քիչ է, նաեւ մեր գործընկերների կարծիքն է անհրաժեշտ»,- ասաց Մարտիրոսեանը:

«Ժառանգութեան» փոխնախագահն ասում է՝ Սահմանադրութեան փոփոխութիւնների դէմ միասնական ճակատով պէտք է հանդէս գան ոչ միայն խորհրդարանական ու արտախորհրդարանական ընդդիմադիր ուժերը, այլեւ մարդու իրաւունքների պաշտպանութեամբ զբաղուող հասարակական կազմակերպութիւնները, քանի որ հրապարակուած նախագծից արդէն պարզ է՝ առաջարկուող փոփոխութիւնները մարդու հիմնարար իրաւունքները չեն ապահովում: Մարտիրոսեանն ասում է՝ սահմանադրական փոփոխութիւնները թոյլ չտալու համար պատրաստ են համագործակցել բոլորի հետ.- «Ժառանգութիւնը» պատրաստ է բոլորի հետ համագործակցել, այդ թւում՝ իշխանութեան այն ներկայացուցիչների հետ, որոնք դէմ են, որ երկրի պետականութիւնը կործանուի»:

Հայ ազգային կոնկրէսի արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի նախագահ Վլադիմիր Կարապետեանն ասում է՝ նպաստաւոր իրավիճակ է ընդդիմադիր դաշտը սահմանադրական փոփոխութիւնների դէմ համախմբելու համար:

«Հողը շատ նպաստաւոր է՝ այն առումով, որ իսկապէս տարբեր հասարակական կազմակերպութիւններ, կուսակցութիւնների գերակշռող մասը մերժում է եւ կարծես թէ միանալու է ժողովրդի պահանջին՝ «ոչ»-ի Սահմանադրութեան փոփոխութեանը: Մենք արդէն մի քանի ուղղութեամբ աշխատում ենք եւ ծրագրում ենք աշխատել: Հիմնականը, որ անելու ենք, դա խորհրդարանում է լինելու, երբ նախագիծը ներկայացուի: Նաեւ աշխատելու ենք լրատուամիջոցների հետ, նախաձեռնելու ենք քննարկումներ, հանրային միջոցառումներ»,- ասաց Կարապետեանը:

ՀԱԿ-ը կարծում է՝ առաւել ակտիւ գործընթացները կը սկսուեն Սեպտեմբերին, երբ նախագիծը մտնի խորհրդարան, հենց այնտեղ է կուսակցութիւնը տեսնում իր հիմնական աշխատանքը:

# «Փորձում Են Վերացնել Նախագահական Ընտրութիւնները, Որտեղ Մշտապէս Պարտուում Են». Ստեփան Դեմիրճեան

Սահմանադրական բարեփոխումների շնորհիւ Հայաստանի իշխանութիւնները ցանկանում են վերացնել նախագահական ընտրութիւնները, քանի որ այնտեղ մշտապէս պարտուում են: NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում նման կարծիք յայտնեց ՀԺԿ նախագահ, ԱԺ ՀԱԿ խմբակցութեան պատգամաւոր Ստեփան Դեմիրճեանը:



ՀԺԿ նախագահ
Ստեփան Դեմիրճեան

Նրա խօսքով՝ իրենց դիրքորոշումը Սահմանադրական բարեփոխումների վերաբերեալ անփոփոխ է. այսօր Հայաստանում Սահմանադրութեան փոփոխութեան հասարակական պահանջ, անհրաժեշտութիւն չկայ:

«Երկրում առկայ ճգնաժամը ոչ թէ Սահմանադրութեան անկատարութեան, այլ ոտնահարման պատճառով է: Այսօր առաջնային խնդիրը ազատ, արդար ընտրութիւնների անցկացումն է: Շարունակաբար կեղծում են ընտրութիւնները. կարծես աւանդոյթ է դարձել ընտրութիւնների կեղծումից յետոյ Սահմանադրութիւն փոխելը: Պէտք է փոխել իշխանութիւններին, պէտք է Հայաստանում ձեւաւորել Սահմանադրութիւնը յարգելու աւանդոյթ»,- ասաց Ստեփան Դեմիրճեանը:

ՀԱԿ խմբակցութեան պատգամաւոր մէկ անգամ եւս շեշտեց, որ իրենք ոչ մի բովանդակային քննարկման մէջ չեն մտնելու իշխանութիւնների հետ: Նրանց համար ակնյայտ է, որ բարեփոխումները չեն անցնելու:

Յիշեցնենք, որ Յուլիսի 15-ին հրապարակուել են Սահմանադրութեան նոր նախագծի 1-7-րդ գլուխները: Նոր նախագծով նախատեսուում է անցում կառավարման խորհրդարանական համակարգի:

# Հայաստանում Ամենակոռումպացուածը Շարունակում է Մնալ դատական համակարգը

Հայաստանում կան օրէնքներ, որոնք պրակտիկայում այդպէս էլ կիրառութիւն չեն ստանում, ասում է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի տնօրէն Վարուժան Հոկտանեանը:



«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի տնօրէն Վարուժան Հոկտանեան

«Օրէնքի եւ պրակտիկայի չափողականութիւնների միջեւ տարբերութիւն կայ, յաճախ դա ցոյց է տալիս իմիտացիան, երբ փորձում են օրէնքը ձեւական կիրարկել, իրապէս այդ օրէնքը չի աշխատում»,- Գիւմրիում լրագրողների հետ հանդիպմանը յայտարարեց Հոկտանեանը:

Հակակոռուպցիոն կենտրոնը Հայաստանի օրինաւորութեան ազգային համակարգի գնահատում է անցկացրել: 13 համակարգ է ընտրուել՝ սկսած նախագահից, վերջացրած լրատուամիջոցներ ու բիզնես: Ըստ զեկոյցի արդիւնքների՝ Հայաստանի զարգացման թիւ 1 խոչընդոտը կոռուպցիան է:

Ամենակոռումպացուածը մնում է դատական համակարգը չնայած այն հանգամանքին, որ դատաւորների աշխատավարձը վերջին տարիներին հասցուել է 500-600 հազար դրամի՝ կաշառակերութեան մակարդակը մեղմելու համար: Ըստ Հոկտանեանի՝ սրա բացատրութիւնը մէկն է՝ չկայ պատժիչ մեխանիզմ:

«Եթէ դու աշխատավարձ ես բարձրացնում, եւ միեւնոյն ժամանակ չկայ ոչ մի հսկողութիւն այդ դատաւորի վրայ, նա կը շարունակի նոյն ագահութեամբ, նոյն եռանդով ուտել: Վերահսկելու մեխանիզմ պիտի լինի»,- ասաց Հոկտանեանը:

Քաղաքական կամքի առկայութեան դէպքում կոռուպցիան կարելի է շատ արագ վերացնել, օրինակը Սինգապուրն է, յետոյ՝ մեր հիւսիսային հարեւան Վրաստանը. Հայաստանում քաղաքական այդ կամքը չկայ, ասում է հակակոռուպցիոն կենտրոնի ղեկավարը:

«Վրաստանի դէպքում դա սկսուեց վերեւից, երբեք ներքեւից չի եղել այդ ճնշումը, որ «չէ, պէտք է մաքրուի»: Մեզ մօտ էլ բոլորն ասում են՝ «ի՞նչ վատ բան է կոռուպցիան, ոնց ենք մենք տանջւում սրա ձեռը», բայց լուրջ քայլեր չեն արւում»,- նշեց Հոկտանեանը:

Հարցին, թէ Հայաստանում ե՞րբ հնարաւոր կը լինի վերացնել կոռուպցիան, Հոկտանեանը պատասխանեց՝ ինքը մարգարէ չէ, որ օր ու ժամ ասի, բայց կան քայլեր, որոնցով հնարաւոր է հասնել դրան:

«Ընտրական համակարգի նորմալ գործելը, կոռուպցիայի նկատմամբ մարդկանց հանդուրժողականութեան նուազեցում, ուղղակի շատ հանդուրժող են, իշխանութիւնների բալանս»,- թուարկեց Հոկտանեանը.- «Եթէ չունես անկախ դատական համակարգ, էլ ի՞նչ կոռուպցիայի դէմ պայքարի մասին խօսք կարող է գնալ: Բիզնեսը եւ քաղաքականութիւնը չպիտի սերտաճած լինեն, նորմալ երկրներում, որտեղ կոռուպցիան ցածր է, պետական պաշտօնեան բիզնեսով չի զբաղւում: Յետոյ մոնոպոլիաների վերացում՝ եւ՛ տնտեսութեան, եւ՛ քաղաքականութեան մէջ»:

# «Ստիպելու Ենք, Որ Ոստիկանութիւնն Ուժ Կիրառի». Անդրիաս Ղուկասեան

«Ոտքի Հայաստան» նախաձեռնութիւնն իր անհնազանդութեան ակցիաները շարունակելու է այնքան ժամանակ, մինչեւ որ ոստիկանութիւնը ստիպուած լինել անհամաչափ ուժեր կուտակել Հանրապետութեան հրապարակում՝ շրջապատելով այն: Այս մասին Հանրապետութեան հրապարակում NEWS.am-ի հետ զրոյցում ասաց «Ոտքի Հայաստան» նախաձեռնութեան խորհրդի անդամ Անդրիաս Ղուկասեանը:



«Ոտքի Հայաստան» նախաձեռնութեան խորհրդի անդամ Անդրիաս Ղուկասեան

«Այսօր մեր ակցիաներին մասնակցում էր մօտաւորապէս 60 մարդ: Նպատակ ունենք այնպիսի իրավիճակ ստեղծել, որ ոստիկանութիւնը ստիպուած անհամաչափ ուժեր կիրառի Հանրապետութեան հրապարակում: Մեր այս քայլով փորձելու ենք ոստիկանութեանը եւ իշխանութեանը բերել այն կարծիքին, որ աւելի ճիշդ է ենթարկուել մեր պահանջին, քան այսքան ռեսուրս ծախսել մեր օրինական պահանջը խոչընդոտելու համար: Այս առումով մեր գործողութիւնները հետեւողականօրէն շարունակուելու են, մինչեւ որ ոստիկանութիւնը ստիպուած լինի բացել Հանրապետութեան հրապարակի կենտրոնը»,-ասաց նա:

Նշենք, որ այս պահին Հանրապետութեան հրապարակում իրավիճակը խաղաղ է: Մեծ թւով ոստիկաններ շարունակում են հսկել ակտիւիստներին: Ակտիւիստների թիւը մի քանի տասնեակ է: Նրանք վանկարկում են՝ «Ոչ էլեկտրաէներգիայի թանկացմանը»:

«Ոտքի Հայաստան» շարժումը յայտարարել է, որ 72-ժամեայ նստացոյց է սկսում: Սակայն ոստիկանութիւնը նրանց թոյլ չի տալիս մօտենալ հրապարակի կենտրոնի գորգին: Ակտիւիստները գիշերել են Հանրապետութեան հրապարակում: Գիշերը խաղաղ է անցել, առաւօտից վերսկսուել են ակտիւիստների անհնազանդութեան ակցիաները:

Միաժամանակ, Վանաձորից մեկնարկել է շարժման անդամների մարզային երթը, որի մասնակիցներն իրազեկման ակցիաներ կանցկացնեն Գիւմրիում, Թալինում, Աշտարակում, ապա կգան մայրաքաղաք:

Յիշեցնենք, որ «Ոտքի Հայաստան» նախաձեռնութիւնը յայտարարել էր, որ եթէ ՀԾԿՀ-ն չեղեալ չյայտարարի էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման մասին որոշումը բողոքի ակցիաներ են սկսելու: Նախաձեռնութեան անդամներն այցելելու են մարզեր, ինչպէս նաեւ փողոցներ են փակելու:

## ԼՈՒՐԵՐ

# «Մադրիդեան Սկզբունքների Հիման Վրայ Տեւական Կայուն Խաղաղութիւնն Անհաւանական Մի Բան Է». Արման Մելիքեան

*Լեռնային Ղարաբաղի նախկին արտգործնախարար Արման Մելիքեանը Tert.am-ի հետ զրոյցում տեսակէտ յայտնեց, որ պատերազմական գործողութիւնների վերսկսման վտանգն էապէս աճել է՝ հաշուի առնելով, որ մեր եւ յարակից տարածաշրջաններում աշխարհաքաղաքական զարգացումների նոր փուլ է սկսուել: «Թէեւ նախկինում եւս հրադադարի պարբերական խախտումներն ու բաժանարար գծի երկայնքով իրավիճակը թէժ պահելն ադրբեջանական շանտաժի քաղաքականութեան կարեւոր բաղադրատարրեր էին, այժմ՝ իրավիճակի որակական փոխակերպման հետեւանքով, պատերազմական գործողութիւնների վերսկսման վտանգն էապէս աճել է»,- ասաց նա:*



*Լեռնային Ղարաբաղի նախկին արտգործնախարար Արման Մելիքեան*

- Պարո՞ն Մելիքեան, վերջին շրջանում կրկին սահմանին լարուածութիւնը ատրպէյճանական կողմը մեծացնում է, ինչո՞վ է դա պայմանաւորուած:

*- Մեր եւ յարակից տարածաշրջաններում աշխարհաքաղաքական զարգացումները նոր փուլ են թեւակոխել: Թէեւ նախկինում եւս հրադադարի պարբերական խախտումներն ու բաժանարար գծի երկայնքով իրավիճակը թէժ պահելն ատրպէյճանական շանտաժի քաղաքականութեան կարեւոր բաղադրատարրեր էին, այժմ՝ իրավիճակի որակական փոխակերպման հետեւանքով, պատերազմական գործողութիւնների վերսկսման վտանգն էապէս աճել է:*

- Նկատելի՞ է արդեօք բանակցային գործընթացների տեղաշարժ՝ հաշուի առնելով Մինսկի խմբի համանախագահների տարբեր նպատակներով հանդիպումները, տարբեր յայտարարութիւնները, անգամ նաեւ Արտաքին գործերի նախարարների մակարդակով եւ եթէ այո, ապա ինչ սպասելիքներ կարող են լինել: Օրերս նաեւ հրապարակում եղաւ, որ ՌԴ ԶՈՒ գլխաւոր շտաբի պետ Իգոր Սերգունը Երեւանում է եղել, Պաքու էր մեկնել ԱՄՆ միջազգային էներգետիկ հարցերով պետդեպարտամենտի համակարգողը: Նախադրեալներ տեսնո՞ւմ էք, որ բանակցային գործընթացում կարող է առաջընթաց նկատուել:

*- Պէտք է իրատես լինենք՝ Մադրիդեան սկզբունքների հիման վրայ տեւական կայուն խաղաղութիւն հաստատելը անհաւանական մի բան է: Եթէ այդ սկզբունքների որոշ դրոյթներ չվերանայուեն ու դրանցում առկայ էական բացերը չլրացուեն նոր գաղափարներով, ապա դրանց կիրառմամբ առկայ ստատուս քվոյի խախտումը կարող է տեղի ունենալ միայն այն դէպքում, եթէ հակամարտութեան կողմերից մէկը ստիպուած լինի իր ռազմական կամ դիւանագիտական կապիտուլյացիայի մասին յայտարարել:*

- Տեղեկութիւններ կան, որ այս օրերին ԼՂ հակամարտութեան կարգաւորմամբ զբաղուող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները նախապատրաստում են Սարգսեանի ու Ալիեւի հերթական հանդիպումը: Ի՞նչ ակնկալիքներ կարելի է ունենալ այդ հանդիպումից:

*-Եթէ իմ ակնարկած լրացումներն ու նոր գաղափարները գոնէ սաղմնային վիճակում դեռ չկան, ապա յատուկ սպասելիքներ նման հանդիպումից չարժէ ունենալ՝ հակամարտութեան կարգաւորման վերաբերեալ Հայաստանի ու Ատրպէյճանի պաշտօնական մօտեցումները դեռ շատ հեռու են միմեանցից, եթէ չասենք՝ միանգամայն հակադիր:*

- Հայկական կողմը մշտապէս յայտարարում է, որ Հայաստանը շահագրգռուած է հարցի խաղաղ կարգաւորմամբ, ի հակադրութիւն ատրպէյճանական կողմի: Չնայած միջազգային հանրութիւնը Հայաստանի դիրքորոշումն է հաստատում, բայց հնարաւո՞ր համարում եք լայնամասշտաբ ռազմական գործողութիւնների վերսկսումը:

*- Կողմերից իւրաքանչիւրն իր մարտավարութիւնն ունի այս հարցում՝ եթէ ոչ ցանկալի արդիւնքին հասնելու, ապա գոնէ տապալումից խուսափելու համար, սակայն քանի որ կողմերի մօտ անմիջնորդ երկխօսութիւն վարելու կամքը չկայ, այդ մարտավարութիւնը մինչ այժմ սպասողական-կրաւորական բնոյթ ունէր: Այժմ իրավիճակը որակական փոփոխութեան է ենթարկուել եւ պատերազմը վերսկսելու վերաբերեալ ատրպէյճանական սպառնալիքները կարող են գործի վերածուել:*

- Տեսակէտներ են յայտնում, որ Իրանի հետ Արեւմուտքի գործընթացներին զուգահեռ տարածաշրջանի եւ ԼՂ հարցը առաջնային պլան է եկել: Համակարծի՞ք էք եւ ի՞նչ զարգացումների կարելի է սպասել:

*- Իրանի եւ Արեւմուտքի միջեւ յարաբերութիւնների կարգաւորումն ու համագործակցութեան բացուող հնարաւորութիւններն իրենց ազդեցութիւնն են ունենալու կարգաւորման գործընթացի վրայ: Ձեմ զարմանայ անգամ, եթէ առաջիկայում ԱՄՆ-ի համար ընդունելի դառնայ իրանցի խաղաղարարների մասնակցութիւնը կարգաւորման գործընթացին: Այլ հարց է, որ իրական կարգաւորումը պէտք է տեղի ունենայ բացառապէս քաղաքական եւ դիւանագիտական գործիքների կիրառմամբ:*

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# Ամերիկացի Դիւանագէտներու Կարծիքով Արեւմուտքը Պէտք Է Վերագործարկի իր Յարաբերութիւնները Կովկասի Հետ

*Իրանի նկատմամբ գործող պատժամիջոցների չեղարկումը կարող է շահաւէտ լինել Հարաւային Կովկասում նրա հարեւանների՝ Հայաստանի, Ատրպէյճանի եւ Վրաստանի համար: Այս մասին ասուած է Հայաստանում եւ Վրաստանում ԱՄՆ նախկին դեսպան Դենիս Քորբոյի, Վրաստանում ԱՄՆ նախկին դեսպան Ուիլյամ Քորթնիի եւ Ատրպէյճանում ԱՄՆ նախկին դեսպան Ռիչարդ Կաուգլարի համատեղ յօդուածում, որը հրապարակուել է Newsweek կայքում:*

*Իրանի միջուկային ծրագրի հեռանկարային համաձայնագիրն իրականացնելիս Արեւմուտքը չպէտք է մոռանայ խոցելի Հարաւային Կովկասի մասին: Ինչպէս կարծում են հեղինակները, Իրանի հետ գործարքը կարող է փոխել հաւասարութիւնը եւ նոր հնարաւորութիւններ բացել երկրների համար:*

*Նրանց կարծիքով՝ Հայաստանը կախուած է Ռուսաստանից եւ Իրանից: Հեղինակները յիշեցնում են, որ անցեալ ամիս Երեւանի փողոցներում ռուս մենաշնորհ ընկերութեան կողմից մատակարարուող էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման դէմ բողոքի ակցիա էր ընթանում: «Ռուսաստանը նաեւ ղեկավարում է երկաթուղիները եւ հիասթափեցնում է Հայաստանին՝ դէմ դուրս գալով Իրանի կողմից ֆինանսաւորուող ընդլայմանը»,- ասուած է յօդուածում:*

*Բացի այդ հեղինակները նշում են, որ Մոսկուան ճնշում է գործադրել Հայաստանի վրայ, որպէսզի նա մուտք չգործի ԵՄ: Հայաստանը նաեւ կախուած է Ռուսաստանի ռազմական աջակցութիւնից եւ ռուսաստանաբնակ հայերի կատարած տրանսֆերտներից:*

*Միաժամանակ Ատրպէյճանում ուժեղանում են ճնշումները, իսկ արեւմտեան արժէքների վրայ հիմնուած գործընկերութիւնը Բաքուն որպէս սպառնալիք է դիտարկում: «Գազը Ատրպէյճանից պէտք է անցնի ԵՄ «Հարաւային գազային միջանցք» յաւակնոտ նախագծով, բայց այն բախւում է մրցակցութեան Ռուսաստանի առաջարկած «Թուրքական հոսք»-ի եւ հնարաւոր է Իրանի կողմից»,- ասուած է յօդուածում:*

*Արեւմուտքի կողմից քննադատութեան ենթարկուող Բաքուն ընտրել է դէպի Մոսկուա հակուած բալանսը: Սակայն Իրանի հետ ռազմական եւ էներգետիկ կապերի հեռանկարները կարող են մեծացնել նրա հնարաւորութիւնները:*

*Հեղինակները Վրաստանը որակում են որպէս Հարաւային Կովկասի ամենաազատական երկիր եւ նշում, որ տարածաշրջանի երկրները ձգտում են մեծ աշխարհաքաղաքական բազմակարծութեան, որը չի սպառնում ռեժիմների գոյութեանը: Նրանք անհանգստանում են Ռուսաստանի աճող ինքնավստահութիւնից եւ Ուկրաինային օգնելու Արեւմուտքի անվճռականութիւնից: «Նրանք յոյս ունեն, որ Չինաստանը եւ հիմա արդէն նաեւ Իրանը կարող են ներդրումներ կատարել տարածաշրջանի էներգետիկ եւ տրանսպորտային ենթակառուցուածքների մէջ»,- ընդգծում են դիւանագէտները՝ նշելով, որ հենց դա պէտք է ստիպի Արեւմուտքին փոխել Հարաւային Կովկասում իր ռազմավարութիւնը:*

*Նրանք կարծում են, որ Արեւմուտքը պէտք է աւելի շատ կապեր հաստատի Հայաստանի քաղաքացիական հասարակութեան հետ, աւելի շատ հնարաւորութիւններ տա Հայաստանին մասնակցելու Արեւելեան գործընկերութեան ծրագրին: Միաժամանակ նրանք կոչ են անում դադարեցնել Ատրպէյճանի մասնակցութիւնն այդ ծրագրին, քանի դեռ այդ երկրում չեն յարգւում մարդու իրաւունքները:*

*Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հակամարտութեանը, Արեւմուտքը պէտք է աշխուժացնի Մինսկի գործընթացը եւ ակտիւացնի ժողովրդական դիւանագիտութիւնը՝ հնարաւոր լուծումներ գտնելու համար, ինչպէս նաեւ Թուրքիային կոչ անի զարգացնել Հայաստանի հետ հաշտեցման նոր նախաձեռնութիւնը, քանի որ փակ սահմանները մեծացնում են Հայաստանի կախուածութիւնը Իրանից: Իսկ Վրաստանի դէպքում անվիզա ռեժիմը պէտք է լինի ԵՄ առաջնայնութիւնը:*

*«Սակայն միեւնոյն ժամանակ Հարաւային Կովկասը խոցելի է մնում: Արեւմուտքը պետք է հետեւի առաւել սթափ մարտավարութեան, որպէսզի օգնի Հարաւային Կովկասին՝ գործ ունենալով անորոշ Իրանի եւ առաւել յամառ Ռուսաստանի հետ»,- կարծում են դիւանագէտները*

# Հայաստանը Սիրիայում Օպերայի Ժամանակ Է Գտել

*Սիրիայում Հայաստանի դեսպան Արշակ Փոլադեանը հանդիպել է Սիրիայի մշակոյթի նախարարին եւ քննարկել է մշակութային համագործակցութեան հարցերը: Այդ թւում, խօսուել է Դամասկոսի օպերայում հայ երաժիշտների աշխատանքի հնարաւորութեան մասին, ինչպէս նաեւ Սիրիայում եւ Հայաստանում մշակոյթի տարիների անցկացման մասին:*

*Տեղեկատուութիւնը հնչում է որպէս կոդաւորուած հաղորդագրութիւն, որովհետեւ Սիրիայում պատերազմ է, այդ երկրի նախագահ Բաշար Ասադը յայտարարել է, որ կառավարութիւնը չի վերահսկում երկրի տարածքի մի մասը եւ կենտրոնացնում է զինուժը գոնէ մնացեալ մասը պահելու համար:*

*Թուրքիան գնդակոծում է քրդերի վերահսկողութեան տակ գտնուող սիրիական բնակավայրերը: Սիրայում բոլորը պատերազմում են իրար դէմ՝ Իսլամական պետութիւնը ահաբեկչական խմբաւորումը, Ասադը, քրդերը, ընդդիմութիւնը, կրակում են հրանոթները: Միայն Հայաստանն է փորձում խօսել երաշժտութեան լեզուով եւ առաջարկում է Սիրիային մշակութային համագործակցութիւն:*

www.massisweekly.com

# ՖՐԵԶՆՈՅԻ ՄԷՋ ՊՂԾՈՒԱԾ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅՈՒՇԱԿՈԹՈՂԸ



ԱՄՆ-ի Ֆրեզնօ քաղաքին մէջ պղծուած է Հայոց ցեղասպանութեան նահատակներու 100-րդ տարելիցին նուիրուած յուշակոթողը, որ բացուած էր այս տարուայ Ապրիլ ամսուն: Պերճ Աբգարեանը՝ Ֆրեզնոյի Հայաստանի Հանրապետութեան պատուոյ հիւպատոսը, այս առիթով ըսած է, որ չարագործ մը պոկած է յուշկոթողի ամրացուած յուշատախտակներէն մէկը: Կատարուածը համարելով ցաւալի եւ անհանդուրժելի իրողութիւն՝ ան չէ թաքցրած իր հիասթափութիւնը եւ համոզմունք յայտնած է, որ կատարուածը ատելութեան հողի վրայ տեղի ունեցած յանցագործութիւն է:

Յուշարձանը, որ ամբողջացած է 9 սիւնով, նման Հայաստանի Ծիծեռնակաբերդի յուշահամալիրին: Սիւներու բարձրութիւնը շրջանաձեւ նուազած է՝ 1-ինը 19 ոտք բարձրութեամբ, վերջինը՝ 15 ոտք: Սիւներու վերեւը կիսատ լուսապսակ է, որ կը խորհրդանշէ հայ ժողովրդի միասնութիւնը: Այս յուշարձանը խորհրդանշական ու պատմական նշանակութիւն ունի Ֆրեզնոյի հայ համայնքի համար:

# ԱՐԱՐԱՏԸ ՆՈՒԱՃԱԾ ԾՈՎԱԿ ՔԷՕՇԿԵՐԵԱՆԸ ՀԻՒՐԸՆԿԱԼՈՒԵՑԱՒ ՀՀ ՍՓԻՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ



Յուլիս 28-ին ՀՀ Սփիւռքի նախարարութիւն հիւրընկալուեցան օրեր առաջ Արարատի գագաթը նուաճած՝ Լիբանանի Սահակեան Լեւոն-Մկրտիչեան քոլէճի տնօրէն Նազօ Ճէրէճեան եւ 9-րդ դասարանի աշակերտուհի Ծովակ Քէօշկերեան:

Նախարար Հրանոյշ Յակոբեան՝ ողջունելով հիւրերը, մասնաւորապէս նշեց. «Այսօր հաւաքուած ենք շատ իւրօրինակ առիթով: Փոքրիկ Ծովակը սխրանք գործած է. 13 ամեայ աղջիկը նուաճած է Բիբլիական Արարատի գագաթը: Որքան կամք, սէր, հայրենա-սիրութիւն, Արարատը տեսնելու, նուաճելու ձգտում է անհրաժեշտ այդ համարձակ քայլը ընելու համար: Շնորհակալութիւն ծնողներուն, որ Ծովակը դաստիարակուած է ազգասիրութեան, հայրենասիրութեան մթնոլորտի մէջ: Յատուկ շնորհակալութիւն դպրոցի տնօրէնին: Դպրոցն է մարդակերտումի կեդրոնը, դպրոցի շնորհիւ է, որ Սփիւռքի մէջ մեր երեխաները կ'որոշեն հայ ապրիլ, հայ մնալ»:

Սահակեան Լեւոն-Մկրտիչեան քոլէջի տնօրէն Նազօ Ճէրէճեանը շնորհակալութիւն յայտնեց ջերմ ընդունելութեան եւ բարձր գնահատանքի համար. «Սփիւռքի նախարարութիւնը աշխարհի ամենաաշխոյժ նախարարութիւնն է, մենք այդ մէկը կը տեսնենք, կը զգանք նոյնիսկ հեռուէն: Շնորհակալութիւն ձեր կատարած աշխատանքի համար»:

13-ամեայ Ծովակ Քէօշկերեանը նշեց, որ Արարատ լեռը բարձրանալը եղած է իր մանկութեան երազանքը: Պատմեց, թէ ան ինչպէս նախապատրաստուած է, մինչեւ Արարատ բարձրանալը ինչ բարձունքներ նուաճած է եւ ինչ արգելքներ յաղթահարած: «Շնորհակալ եմ դպրոցիս եւ անոր տնօրէն Նազօ Ճէրէճեանին, որոնց շնորհիւ երազանքս իրականութիւն դարձաւ: Արարատի գագաթէն կ'երեւէր Երեւանը, Խոր Վիրապը, Հայրենիքս: Այնքան ուրախ էի, որ այդ ամէնը կրցայ տեսնել նաեւ Արարատի գագաթէն»:



Յուլիս 21-ի արեւածագին Ծովակ Քէօշկերեանը բարձրացաւ Արարատ լերան գագաթը: Վերելքի երրորդ օրը աղջնակը նուաճեց 5165 բարձրութիւն ունեցող բիբլիական լերան գագաթը:

Իրականացաւ Ծովակի մանկութեան օրերու երազանքը:

«Հայերն Այսօր»

# ԱՏՐՊԷՅՃԱՆԸ ՍՏԵՐԼԻԳՈՎԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՏԱԽՈՒԶՈՒՄ Է ՅԱՅՏԱՐԱՐԵԼ




Ատրպէյճանի գլխաւոր դատախազութեան ծանր յանցագործութիւնների քննչական վարչութիւնը ռուս գործարար Գերման Ստերլիգովի դէմ քրէական գործ է յարուցել պետական սահմանը ապօրինի հատելու համար, իսկ Նասիմինեան շրջանի դատարանն էլ այսօր Ստերլիգովի նկատմամբ խափանման միջոց է ընտրել կալանքը եւ նրա նկատմամբ միջազգային հետախուզում յայտարարել:

Այս լուրը յայտնող ԱՊԱ գործակալութիւնը նշում է, որ Ատրպէյճանը դիմել է Ինտերպոլի ազգային բիւրոյին՝ խնդրելով օպերատիւ-որոնողական գործողութիւններ իրականացնել:

Գործարար Ստերլիգովն ու նրա ընտանիքի անդամները այժմ գտնւում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնում:

# ՊԱՏԱՐԱԳ ԿԸ ՄԱՏՈՒՑՈՒԻ ՀԱՅԵՐՈՒ, ՅՈՅՆԵՐՈՒ ԵՒ ԱՍՈՐԻՆԵՐՈՒ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Լոս Անճելոսում կը մատուցուի պատարագ՝ նուիրուած մէկ դար առաջ Օսմանեան կայսրութիւնում հայերի, յոյների եւ ասորիների դէմ իրականացուած ցեղասպանութեան նահատակների յիշատակին: Ինչպէս հաղորդում է «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով MassisPost-ը, համատեղ պատարագը կը կայանայ Օգոստոսի 4-ի երեկոյեան ասորական սուրբ Մարի Փարիչ եկեղեցում: Արարողութեան ժամանակ ելոյթներ կ'ունենան Լոս Անճելոսի քաղաքային խորհրդի անդամ Փոլ Գրիգորեանը, հայ առաքելական, ասորական եւ յունական եկեղեցու հոգեւոր հովիւները:

«Անընդունելի է, որ կատարուածից 100 տարի անց էլ հայերի, յոյների եւ ասորիների ցեղասպանութիւնը շարունակում է մնալ չճանաչուած եւ չդատապարտուած: Դա վիրաւորում է այն միլիոնաւոր հոգիներին, ովքեր սպանուել են»,- յայտարարել է Լոս Անճելոսում ասորիների Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի յանձնաժողովի նախագահ Էդմոնդ Բաթմալեկը՝ յաւելելով, որ ասորիներն իրենց աջակցութիւնն են յայտնում հայ եւ յոյն ժողովուրդներին, որոնք հսկայական աշխատանք են կատարել ընթացիկ տարուայ ընթացքում, որպէսզի ցեղասպանութեան ճանաչման հարցը լինի միջազգային քաղաքականութեան օրակարգում:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
email: massis2@earthlink.net

## ՔՈՒՊԱՅԷՆ՝ ԻՐԱՆ, ԿԵՑՑԷ՛ ՕՊԱՄԱՆ

*ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ*

*Նախագահ Պարաք Օպաման ամերիկացի չորրորդ նախագահն էր, որուն տրուած էր Նոպէլեան Խաղաղութեան Մրցանակը: Իրմէ առաջ այդ մրցանակին արժանացած էին նախագահ Թէոտոր Ռուզվէլթ՝ 1906-ին, հայու բարեկամ՝ նախագահ Վուտրօ Ուիլսըն՝ 1919-ին, եւ Ճիմի Քարթըր՝ 2002 թուականին:*

*2009 թուականի Հոկտեմբեր ամսուն մէջ, երբ Խաղաղութեան Նոպէլեան Մրցանակը կը տրուէր նախագահ Օպամային, տակաւին միայն ինը ամիս առաջ ան իշխանութեան գլուխ անցած էր եւ իր այդ մրցանակին արժանանալը պատճառ դարձած էր որ թէր ու դէմ գրութիւններ տպուին աշխարհի զանազան լրատուամիջոցներու խմբագրական կազմերուն կողմէ, նամանաւանդ ամերիկեան լրատուամիջոցներու էջերուն վրայ: Ամերիկեան հռչակաւոր թերթերէն՝ The New York Times, The Los Angeles Times, The Washington Post, The Wall Street Journal, բոլորն ալ այդ համբաւաւոր մրցանակին Օպամային տրուիլը նկատեցին լուելեայն դատապարտութիւն կամ՝ ծածուկ քննադատութիւն նախորդ նախագահ՝ Ճորճ Պուշի ռազմատենչ քաղաքականութեան եւ անոր նախագահութեան իշխանաձեւին չարակամ (ill-will) ըլլալու բնոյթը խարանող արտայայտութիւն: Միւս կողմէ, National Review թերթի սիւնակագիրներէն Jonah Goldberg գրած էր թէ «վստահաբար մէկը Իրանի մէջ աւելի շահ ունեցաւ Օպամային ստացած մրցանակէն«, իսկ Washington Post-ի սիւնակագիրներէն Michael Gerson գրած էր, թէ՝ մրցանակը տալով Օպամային, Նոպէլեան յանձնախումբը փոխանակ զայն մեծարելու, զինք նեղը դրած էր (embarrassed him): Անդին, Քուպայի Նախագահ Ֆիտէլ Քասթրօն Օպամայի տրուած մրցանակը նկատած էր դրական երեւոյթ, ըսելով որ ան պէտք է դիտուի եւ բացատրուի որպէս քննադատութիւն այն մահասփիւռ քաղաքականութեան, որ կը գործադրուէր ու կը կիրարկուէր ամերիկացի նախկին նախագահներուն կողմէ:*

*Նոպէլեան Մրցանակի յանձնախումբի Նախագահ Thorbjam Jaglad այն ատեն յայտարարած էր թէ Օպամայի տալով այդ մրցանակը, «կը յուսացուի որ այդ գուցէ քիչ մը կը նպաստէ որ ան ընէ այն ինչ որ պիտի փորձէ կատարել», որուն որպէս պատասխան՝ Նախագահ Օպաման իր մրցանակի տուչութեան արարողութեան ընթացքին իր արտասանած ճառին մէջ ըսած էր թէ ինք «կ՛ընդունի այդ մրցանակը որպէս մարտահրաւէր գործի անցնելու»:*

*Վերի նախաբանը տուինք, որպէսզի ըմբռնենք թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս խաղաղասէր Նախագահ Օպաման, որ ամերիկեան երկու պատերազմներու վերջ դրաւ (Իրաք եւ Աֆղանիստան) եւ աննախընթաց ընթացքով չենթարկուեցաւ Ամերիկայի քաղաքական հզօր աղմուկ ստեղծող լոպիներուն եւ մարդոց ճնշումներուն, քաջաբար կատարեց այն ինչ որ կը յուսացուէր իրմէ Նոպէլեան Մրցանակի յանձնախումբին կողմէ եւ այն ինչ որ ինք խոստացաւ ընել որպէս մարտահրաւէր գործի անցնելու:*

*Արդարեւ, Իսրայէլի Նեթանիահուին Իրանի հարուած տալու խրատները եւ անոր ամերիկեան Քոնկրէսին ու Ծերակոյտին առջեւ տրուած ելոյթին կազմակերպիչները, որոնք կը սպառնային աքցանի մէջ առնել Օպաման կամ կը փորձէին անկարող դարձնել զինք, որ Ամերիկայի եւ մարդկութեան շահերէն մեկնած՝ խաղաղ միջոցներով եւ բանակցութիւններու ճամբով կ՚ուզէր լուծել Իրանի հիւլէական ուժի արտադրութեան հարցը, ձախողեցան իրենց ռազմատենչ նպատակներու իրագործման մէջ, շնորհիւ նախագահ Օպամայի խաղաղասէր կամքին եւ անոր մարդասէր նկարագրին: Պահ մը մարդ պէտք է մտածէ թէ ի՜նչ աւեր ու կոտորած, արիւն ու տնտեսական բացարձակ քաոս պիտի ստեղծուէր աշխարհի մէջ, մանաւանդ Միջին Արեւելքի եւ Հայաստանի մէջ, եթէ Նեթանիահուի եւ իր նմաններու փափաքը գործադրուէր եւ ռազմատենչութիւնը յաղթանակէր:*

*Իսկ Քուպայի հետ դիւանագիտական յարաբերութիւններ վերահաստատելու խիզախ քայլը Օպամայի, կարելի է նկատել նաեւ իրականացում այն գործի անցնելու մարտահրաւէրին, զոր ան խոստացած էր 2009-ին Նոպէլեան Մրցանակի ստանձման ժամանակ: Հոս ալ պահ մը աչք նետենք 2016 թուականի Հանրապետական խեղճուկրակ նախագահական թեկնածուներուն վրայ, որոնք ծիծաղելի յայտարարութիւններով եւ քաղաքական տհաս կեցուածքներով կը փորձեն քննադատել Օպամայի բարենպատակ քաղաքականութիւնը՝ ընդունելու հակառակ գաղափարի եւ համոզումի աշխարհը: Արիւն լացող եւ հացի կարօտ աշխարհի բերնով կարելի է ըսել. «Քուպայէն՝ Իրան, կեցցէ՛ Օպաման»:*

## ԻՐԱՆԻ ՀԵՏ ՀԻՒԼԷԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ԾԱԼՔԵՐԸ

*Անցեալ շաբաթ տեղի ունեցան երկու կարեւոր դէպքեր՝ Հիւլէական համաձայնութիւն Իրանի եւ Միջազգային Ապահովութեան Խորհուրդի մշտական անդամներու միջեւ, առաւել՝ Գերմանիա: Երկրորդը՝ համաձայնութիւն եւրոպական կեդրոնական դրամատան եւ միջազգային Սնտուկին մէկ կողմէ, իսկ միւս կողմէ Յունաստանի միջեւ տնտեսական ծրագրի շուրջ, որ վաւերացուեցաւ Յունաստանի խորհրդարանին կողմէ:*

*Ինչ կը վերաբերի առաջին հարցին, պէտք է ըսել որ շատ կարեւոր համաձայնութիւն է հիւլէական համաձայնութիւնը, եւ հակառակ որ Իսրայէլի վարչապետը եւ ամերիկեան Գոնկրէսի կարգ մը հանրապետական անդամներ դէմ են, հաւանական է որ պիտի վաւերացուի եւ գործադրուի, յատկապէս որ Ամերիկայի նախագահը վեթոյի իրաւունքը պիտի գործածէ եթէ Գոնկրէսի մեծամասնութիւնը մերժէ համաձայնութիւնը, ինչ որ ներկայիս հաւանական չէ:*

The Karaburun Science Congress Organization Committee ended its statement by making a collective call for solidarity.

# Nazo Jerejian and Dzovag Keoshkerian Hosted at RA Ministry of Diaspora After Reaching Peak of Mount Ararat



YEREVAN -- On July 28, the RA Ministry of Diaspora hosted Principle of AEBU Sahagian Levon Meguerdichian College of Lebanon Nazo Jerejian and 9th grade student Dzovag Keoshkerian, who climbed to the top of Mount Ararat just recently. At 13 Dzovag is the youngest Armenian girl to achieve this task.

Minister Hranush Hakobyan greeted the guests and particularly mentioned the following: "We have gathered here today on a very special occasion. Dzovag, 13, endeavored and reached the peak of the biblical Ararat. One needs to have so much love, willpower, the feeling of patriotism and the aspiration to reach the top of Ararat to take that daring step. I thank Dzovag's parents for raising her to become patriotic. I would like to express special gratitude to the school's principle. The school is where one becomes an individual. Thanks to Armenian schools, Armenian children of the Diaspora decide to live as Armenians and preserve the Armenian identity."

Principal of the Sahagian Levon Meguerdichian College Nazo Jerejian expressed gratitude for the cordial reception and high appreciation. "The Ministry of Diaspora is the world's most proactive ministry. We see and feel that. Thank you," Jerejian said.



At dawn on July 21, Dzovag Keoshkerian climbed to the top of Mount Ararat. On the third day, she reached the peak of the 5,165 meter high biblical mountain and turned her childhood dream into a reality.

# Russian Businessman German Sterligov Put on International Wanted List by Azerbaijan

BAKU -- Azerbaijani Prosecutor General's Office has opened a criminal case against Russian businessman German Sterligov for visiting Karabakh. He has been put on the international wanted list for "illegally crossing the state border of Azerbaijan".

"In order to popularize the separatist regime at the international level, Sterligov held a press conference in Shusha (Shushi) July 13, 2015. He also posted information in the social network to support the "independence" of the separatist regime, thereby calling for violation of Azerbaijan's internationally recognized territorial integrity, illegal use of natural resources on the occupied lands, money laundering and so on". The statement by the Azerbaijani Prosecutor General's Office reads.

Commenting on the fact of filing a lawsuit against him in Azerbaijan, Sterligov mentioned in his official "Vkontakte" page that it is Azerbaijan's response to his proposal of conducting a peaceful round table discussion with Russian, Armenian and Azerbaijani experts.

"It means that they are afraid of an open discussion with facts about the historical belonging of Karabakh. Armenians are not afraid of an open discussion, Russians are not afraid as well. But Azerbaijanis are in panic and threats come from there. What can it mean?",Sterligov stated.

Sterligov who recently returned from Moscow to Shushi, called the Azerbaijanis "in order once again to be confirmed publicly the incontestable and absolute historical truth: Karabakh is an ancient Armenian territory".

# "Two Pillars Keep Haigazian Standing Strong Throughout the Years"

**Haigazian University would not be here today without the outstanding leadership it has had over the last 60 years. Two such passionate visionaries were Dr. John Markarian and Wilma Cholakian.**



**Haigazian University Benefactor Joyce Philibosian Stein with President Dr. John Markarian at his 90th birthday celebration**

It was a memorable day in 1955 when John Markarian, a young tenured Religion Professor at La Fayette College in Pennsylvania, relinquished that position by accepting the invitation to serve as Founding President of Haigazian College. History proved the decision providential.

Mr. Stephen Mehagian and his wife Mary, of Phoenix, Arizona, were the first to dream of the possibility of a college in Lebanon. Mary was the daughter of Dr. Armenag Haigazian, the martyred Headmaster of The Jenanyan Apostolic Institute of Konia, Turkey. The Mehagians met with Mr. & Mrs. Stephen Philibosian of Philadelphia. They shared a vision for a college in Lebanon—Haigazian College.

Arriving in Beirut with his late wife Ruth and young daughter Joanne, the Markarians found themselves in a new environment. With a faculty and staff of twelve, and 50 students, a small family was formed. Both President and student were eager to embark on their new venture, facing many challenges together. Fortunately, benefactors quickly recognized and addressed these needs for a school in the Middle East. Dr. Markarian's first term as President lasted until June 1966. The expanded campus now includes the campus icon—The Mugar Building —complemented with the Aharonian, Philibosian, Heritage, and Mehagian Buildings.

Civil War raged in Beirut for the next ten years of Markarian's Presidency—1972-1982. Yet, this erudite pastor and educator provided a haven for students at Haigazian—even as bombs were falling and chaos reigned. Markarian, and his courageous wife Inge, developed the strategy of loving the enemy with food and drink–not hostility. Their inspiration: Romans 12:20: "If your enemies are hungry, feed them; if they are thirsty, give them something to drink; for by doing this you will heap burning coals on their head." They fought the war from their dining room, not in the streets. They opened their doors to all—resurrecting, in this one institution, those colleges long lost in Turkey by the Genocide.

With a student body representing students from various religious and political leanings, Markarian's unique form of diplomacy and understanding of students and various political factions, was legendary. Haigazian, with a current student body of 950, is now one of the leading universities in the Middle East, and the only Armenian University in the Diaspora. Formerly quoting: "No qualified Armenian student is ever denied entrance," unfortunately no longer holds true. Many Armenian students, some refugees, do not even apply because the $8,500 tuition is beyond their realm of possibility— reasons for raising critical funds for the continued mission of Haigazian's remarkable vision.

Markarian's experiences and influence over the years at Haigazian could fill a book—which they do in his memoir, "Thirsty Enemy," a testimony to his principle of "overcoming evil with good." He is now 98 years old, and lives with his lovely wife Inge in West Pittston, Pennsylvania. His life-long passion for tennis and golf have subsided. His memories of Haigazian and wonderful friendships made along the way are always present. One need only speak to him on the phone to hear his still-vibrant voice— recalling his wonderful, challenge-filled years at the University.

After Markarian's final retirement, the University was left without a shepherd. However during these crucial war years, Wilma Cholakian, Administrative Dean, became the quintessential hero of Haigazian University. She was absolutely fearless during the time of Lebanon's Civil War. Always in harm's way, Wilma served Haigazian University as the intrepid Administrative Dean from 1985 to 1995. In these ten years, she accomplished an amazing feat—moving the war-beleaguered University to Christian East Beirut. She accomplished all this, while at the same time maintaining a high level of Academics in West Beirut.



**Wilma Cholakian, Past Administrative Deaf of Haigazian University**

Among many of her heroic efforts, Wilma boldly secured the safety of Haigazian priceless Armenian Library. Prior to her role as Administrative Dean, Wilma served as Haigazian Registrar and Academic Dean. Her unwavering strength, energy, and will upheld her student body throughout their college experience. Indeed, Miss Cholakian was the quintessence of Haigazian and will always be remembered with the greatest of admiration.

The October 3rd 60th Anniversary Gala Celebration will be the launch of a $6,000,000 endowment fund expansion campaign for Haigazian University. Celebrations will continue after the performance with a Black Tie Gala Supper in the stunning Grand Hall of the Dorothy Chandler Pavilion.

For Ticket information call 1-844-809-4860 or visit the website www.haigazian.org

# Conference: "Issues of Convergence Between Western Armenian and Eastern Armenian"

YEREVAN — On July 29, the RA Ministry of Diaspora and the Hrachya Atcharyan Language Institute of the National Academy of Sciences of the Republic of Armenia (NAS RA) launched the 2-day conference on "Issues of Convergence between Western Armenian and Eastern Armenian" at the sessions hall of the NAS RA.

The first session was moderated by Syrian-Armenian linguist, pedagogue, author of textbooks and lecturer of Yerevan State University Hagop Cholakian, who delivered a speech on "Issues of Convergence between the Two Ramifications of Literary Armenian In the Light of Relevant Experience at Armenian Schools Abroad". In his speech, Cholakian presented the problems with the teaching of Western Armenian at Armenian schools of the Diaspora and explained why there is a need to develop certain methods and a certain concept paper for the effective teaching of Armenian for Armenian children living and receiving an education in multicultural and multilingual environments.

Scientific worker of the Austrian Academy of Sciences Hrach Mardirosian delivered a speech entitled "Thoughts on Issues of Modern Armenian". In his speech, Mardirosian touched upon the issue of whether the grammatical and orthographical differences between the two ramifications of Armenian play an essential role in terms of national unity or not. Mardirosian brought up the example of the film "Resurrection" and presented the needless loan words and neologisms.

Lecturer at Yerevan State Linguistic University Susanna Abazyan delivered a speech on the parallels between Western Armenian and Eastern Armenian in verbal speech.

Teacher at Ohannesian School in Sharja (UAE) Heghnar Kazanjian also touched upon the convergence between Western Armenian and Eastern Armenian and shared her experience in teaching.

Head of the State Language Inspectorate of the RA Ministry of Education and Science Sergo Yeritsyan shared his views on the issues that were being discussed.

The second session of the conference was moderated by Director of the Hrachya Atcharyan Language Institute of the NAS RA Victor Katvalyan and Professor of the University of Sorbonne and author of Western Armenian language textbooks Hilda Panosian-Galfaian.

Head of the Department of General and Comparative Linguistics of the Language Institute of the NAS RA Vazgen Hambardzumyan touched upon the unification of the terminologies in literary Eastern Armenian and Western Armenian.

Hagop Balian, editor-in-chief of Bagin, which is the official newspaper of Hamazkayin Armenian Educational and Cultural Society, presented certain steps that could contribute to the convergence between the two ramifications of the Armenian language and presented his proposals.

President of "Mesropyan Ukht" Union for Language Preservation Nshan Vorperian (USA) talked about the problems in regard to the relationship between the ramifications of literary Eastern Armenian and literary Western Armenian and suggested creating a pan-Armenian committee on terminologies, as well as discuss and sum up the issues related to unification of orthography of Western Armenian and Eastern Armenian.


**San Diego Area**

**August 16-Sunday- Grape Blessing and Picnic**

St. John Garbed Armenian Church of San Diego.

Church Service/Badarak begins at 9:30 at

St John Garabed Armenian Church

4473 30th St. SD CA 92116

**Grape Blessing & Picnic will take place**

At Vacation Village East Mission Bay beginning at 11:00am

Directions from Los Angeles: take I-5 South, exit and go right on Sea World Drive, right on Ingraham, left on Vacation Road. LOOK FOR ARMENIAN PICNIC SIGNS!

**Everyone Welcome to Enjoy…**

Shish kebab/Chicken Kebab dinner, music, tavloo tournament and games for the children.

For more information, call the Church Office (619) 284-7179 or stjohngarabed@sbcglobal.net

# ՆԱԶԻԿ ԱՐՄԵՆԱԿԵԱՆԻ «ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐ» ՖՈՏՈԳԻՐՔԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆ ԻՐԵՆՑ ՄԱՇԿԻ ՎՐԱՅ ԶԳԱՑԱԾՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ Է



*Լուսանկարիչ Նազիկ Արմենակեանը Յուլիսի 24-ին հանրութեան դատին է ներկայացրել Հայոց ցեղասպանութիւնը վերապրածների լուսանկարների ֆոտոգիրքը: Տարիների աշխատանք է պահանջուել, որպէսզի լուսանկարիչը հաւաքագրի Հայաստանի տարբեր շրջաններում բնակուող 45 վերապրածների անձնական պատմութիւնները, լուսանկարչական սարքի միջոցով արձանագրի սարսափի դրոշմը նրանց աչքերում: «Վերապրածներ» գրքի շնորհանդէսը կայացաւ արուեստասէրների, Նազիկ Արմենակեանի ընկերների եւ պարզապէս հետաքրքրուած հանդիսատեսի ներկայութեամբ՝ գողտրիկ միջավայրում, գրում է «Արմենպրես»-ը:*

*Լուսանկարիչը ներկայացրել է «Վերապրածներ» նախագծի ստեղծման պատմութիւնն ու իր, որպէս վաւերագիր լուսանկարչի, փորձառութիւնը: Նրա խօսքով՝ ամէն ինչ սկիզբ է առել 2005-ին, երբ Կովկասի ինստիտուտում սովորելիս առաջադրանք էր կատարում եւ նկարել է Հայոց ցեղասպանութեան ականատես 100-ամեայ Ռեմելլային: «Ինձ համար այդ ամէնը նոր էր. տեսնել 100-ամեայ կնոջ, ով խօսել համարեա՛ չէր կարողանում, չէր տեսնում: Այդ ժամանակ մտածում էի՝ ինչպէս նկարեմ, որ հետաքրքիր լինի: Մի միտք ծնուեց. ուզեցի նրա երիտասարդ տարիների լուսանկարը, քանի որ այն, ինչ տեսնում էի այդ պահին, հնարաւոր չէր պատկերցնել, թէ ինչպիսին էր եղել նա: Յետոյ խնդրեցի, որ նա պահի իր 20 տարեկանի լուսանկարը ու այդպէս նկարեցի: Նրա կնճիռները, 20 տարեկանի լուսանկարը, պատահական ընտրուած պատի ֆոնը հնարաւորութիւն տուեցին ստանալ նկար, որը սիրուեց շատերի կողմից: 2.5 տարի յետոյ կրկին որոշեցի գտնել վերապրածների ու շարունակել շարքը: Ես, իհարկէ, չէի պատկերացնում, թէ ինչ լուրջ աշխատանք էի նախաձեռնում եւ թէ որքան շուտ պէտք է նախաձեռնած լինէի: Պէտք է շատ մարդկանց հասնցէի լուսանկարել, երբ իրենք աւելի լաւ վիճակում էին ու աւելի շատ բան էին յիշում»,- պատմել է Նազիկ Արմենակեանը:*

*Լուսանկարիչը վերյիշում է, թէ որքան դժուարութեամբ էր գտնում վերապրածներին, ունէր միայն հասցէներ: Ժամանակ է եղել, որ մի քանի գիւղ է հասել եւ նրանցից ոչ մէկը ողջ չի եղել: «Երբեմն ստացւում էր այնպէս, որ նրանց վերջին լուսանկարներն էի անում, ինչն ինձ համար շատ դժուար էր»,- ասել է Նազիկ Արմենակեանը:*

*«Մէկ անգամ հասայ գիւղ, հասցէն գտայ, տան դիմաց կանգնել, սպասում էի, մտածում՝ ինչպէս մտնեմ տուն, ինչ խօսեմ, մէկ էլ մի աւտոմեքենայ կանգնեց, դագաղ հանեցին: Ես խառնուեցի, հարցնում էի, թէ ով է մահացողը, ու ասացին այդ կնոջ անուն-ազգանունը, ում փնտրում էի: Գնացի նստեցի մեքենան, որ յետ վերադառնամ, շատ վատ էի զգում, լաց էի լինում: Շարժուել էինք արդէն, բայց մտքովս ինչ-որ բան անցաւ ու վարորդին խնդրեցի, որ յետ գնանք այդ կնոջ տուն: Ես հասկացայ, որ կարեւոր է ցոյց տալ, որ այդ մարդիկ մահանում են, այսինքն՝ նրանք յաւերժ չեն՝ չնայեած 100 տարի ապրել ու դեռ ապրում են, որովհետեւ ասելիք ունեն: Ես հասկացայ, որ այդքան տարի այդքան ասելիք պահելով, լռութիւն պահելով, իրենք ինչ-որ բանի էին սպասում»,- վերյիշել է լուսանկարիչը:*

*Նազիկ Արմենակեանին նախագիծը թոյլ է տուել կարեւոր մարդկային յարաբերութիւններ հաստատել: «Նախագծի միջոցով ստեղծուած կապը որոշ վերապրածների հետ շարունակուեց: Ես անընդհատ վերադառնում էի նրանց մօտ, ինձ հետաքրքիր էր նրանց այցելել ու տեսնել, թէ ինչպէս են»,- նշել է նա: Այսօր, երբ գիրքը պատրաստ է, լուսանկարիչը մեծ բաւարարուածութեամբ փաստում է, որ չափահաս երեխայի նման «նրան» ուղարկում է հասարակութիւն:*

*Ֆոտոգրքի խմբագիր, կինոգէտ, համադրող Վիգէն Գալստեանի խօսքով՝ գիրքը խմբագրելու Նազիկ Արմենակեանի առաջարկն ընդունել է որոշակի վերապահումով: «Համաձայնեցի այն պայմանով, որ մենք կ՚աշխատանէք ու մի փոքր էլ կը զարգացնենք նախագիծը, որպէսզի այն համապատասխանի գրքի ֆորմատին: Ոչ ես, ոչ էլ Նազիկը մտադրութիւն չունէինք այսքան երկար ժամանակ աշխատանք տանել, բայց քանի որ երկուսիս համար էլ կարեւոր էր՝ գիրքը լինի ամբողջական եւ հնարաւորինս կատարեալ, այդ գործընթացը տեւեց մօտ 10 ամիս»,- ասել է*

*Շար.ը էջ 19*

# «ՀՈՂԸ ԿԸ ԽՕՍԻ».
## ԵՂԵՌՆԱԶՈՀ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՌՈՒՍԵՐԷՆՈՎ ԵՒ ԳԵՐՄԱՆԵՐԷՆՈՎ

*24 Յուլիսին Հայաստանի Գրողներու միութեան կեդրոնին մէջ տեղի ունեցած է «Հողը կը խօսի» թարգմանական ժողովածուներու (ռուսերէն, գերմաներէն) շնորհահանդէսը: Անոր մէջ ներառուած են եղեռնազոհ 10 հեղինակներու՝ Դանիէլ Վարուժանի, Սիամանթոյի, Ռուբէն Սեւակի, Գրիգոր Զօհրապի, Ռուբէն Զարդարեանի, Երուխանի, Թլկատինցիի, Գեղամ Բարսեղեանի, Տիգրան Չէօկիւրեանի, եւ Արտաշէս Յարութիւնեանի գործերը: Թարգմանական ժողովածուներու տպագրութեան նպատակն է աշխարհին ծանօթացնել Հայոց Ցեղասպանութեան զոհ գացած գրողները, անոնց ստեղծագործութիւնները, ներկայացնել հայ գրականութեան լաւագոյն նմոյշները եւ պատմել Հայոց Ցեղասպանութեան արհաւիրքին մասին:*

*Ժողովածուներուն յառաջաբանի հեղինակ Վազգէն Գաբրիէլեան շնորհահանդէսին ընթացքին ըսած է. «Այս գիրքը վերցնելով ձեռքդ՝ երկու զգացում ես ունենում՝ մեծագոյն ցաւ ու տառապանք, որ կորցրել ենք այսպիսի մարդկանց, միւս կողմից էլ՝ հպարտութիւն, որ ունեցել ենք այսպիսի գրողներ:*

*Այս ժողովածուն կարծես մի տեսակ յուշարձան, պանթէոն լինի. իւրօրինակ մի տեղ է, որտեղ մեր հեղինակներն իրենց տառապանքների, ցաւերի, ուրախութեան, գրականութեան մասին զրոյց են բացել»:*

*Թարգմանական ժողովածուի լոյս ընծայման նախաձեռնած է «Հայաստանի գրողների միաւորում» հասարակական կազմակերպութիւնը, լոյս տեսած է Հայաստանի Նախագահի աշխատակազմէն յատ կացուող դրամաշնորհի եւ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի յայտարարած մրցումի ծիրին մէջ: Գերմաներէն ժողովածուն արդէն իսկ ներկայացուած է Գերմանիոյ եւ Աւստրիոյ մէջ:*

*«Աշխարհում արդէն շատերը կարող են այս ժողովածուների միջոցով ծանօթանալ իսկական հայ գրականութեան հետ, միաժամանակ՝ ծանօթանալ մեր մեծագոյն ողբերգութեանը», յայտնած է Վազգէն Գաբրիէլեան՝ աւելցնելով, որ այս գիրքը ընթերցողը որոշակի պատկերացում կ՚ունենայ այն մասին, թէ հայ ազգը ինչպիսի գրողներ ունեցած է եւ ինչպիսի նահատակներ ունեցած է: «Մենք ի վերջոյ մի ամբողջ մշակոյթ ենք զոհաբերել», հաստատած է ան:*

*Գրողներու միութեան նախագահ Էդուարդ Միլիտոնեան նշած է, որ ժողովածուները պիտի ներկայացուին գիրքի տարբեր ցուցահանդէսներու ընթացքին եւ պիտի բաժնուին տարբեր հրատարակչատուներու:*



# ՈՒԽՏԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ, ՅԵՏՈՅ Ի՞ՆՉ
# Ե. ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը
Քո հաւաքական ույժի մէջ է:

(Եղիշէ Չարենց)

ՈՍԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ

Չկայ մեր մէջ անձ մը որ կրնայ յայտարարել թէ ինք հողային պահանջ չունի, ի՛նչ կուսակցութեան եւ կամ յարանուանութեան ալ պատկանի ան, որովհետեւ թշնամին խտրութիւն չդրաւ իր աճաբեկումին, կողոպուտին, բռնաբարութեանց եւ անողոք ջարդին մէջ: Հետեւաբար, մենք ալ իրաւունք չունինք բաժանուելու մեր կողոպտուած արդար իրաւունքին յաջողութեան հասնելու ճիգին մէջ:

Բայց ի՞նչպէս մեր ույժերը ի մի հաւաքել ու կազմակերպել, զանոնք արդիւնագործել եւ ցեղին ի նպաստ ծառայեցնել, -ահա այս է էականն ու հրամայական հարցը, որ պէտք է խորհրդածութեան առարկան դառնայ իւրաքանչիւր ողջմիտ հայուն: Պատասխանատուութեան խոշոր բաժինը կը ծանրանայ այն հաստատութեանց վրայ, որոնք եկեղեցական, բարեգործական ու քաղաքական (Հայ Դատ) գործերը անկեղծօրէն առաջնորդելու կոչուած են, որոնց ույժն ու աղբիւրը նոյն ինքն Հայ Ժողովուրդն է: Եւ այս բոլորը՝ հեռու հատուածական, անհատական եւ շահադիտական բոլոր ախորժակներէ:

Ժամանակն է որ այսուհետեւ անյիշաչարութեամբ մոռնանք մեր բոլոր անցեալի տարակարծութիւններն ու վէճերը եւ լծուինք համազգային լուրջ աշխատանքի, որովհետեւ բոլորս ալ նոյն հայրենազրկութեան հետեւանքներէն կը տառապինք: Ցեղասպանութեան 100 ամեակը հրամայական պարտականութիւն կը դնէ մեր բոլորին վրայ, մտածելու ապագայի մասին եւ պատրաստելու յստակ, մէկին, եւ անբեկանելի ծրագիրներ:

Մէկ ու կէս միլիոն մեր նահատակները, որոնց առաջինները եղան մեր ազգային ղեկավարներն ու մտաւորականները, անժամանցելի արիւնաթաթախ կտակ մը թողուցին մեզի՝ համազգային մեր իրաւունքներու պաշտպանութեան ի խնդիր, որ ուրիշ բան չէ եթէ ոչ մեր հայկական դատը, որ կրնայ իր լրումին հասնիլ միայն կեդրոնական ներկայացուցչական մարմնի մը կողմէ, զոր կարելի է կոչել Արտասահմանեան Ազգային Ժողով կամ Արեւմտահայաստանի Աքսորական Կառավարութիւն, որ պիտի արտայայտէ հաւաքական կամք եւ կորով:

Անշուշտ թէ իւրաքանչիւր սփիւռքեան գաղութ ունի իր «առաջնորդարանը» երբեմն ալ «առաջնորդարանները», իրենց յարակից մարմիններով...հոգաբարձութիւն, տիկնանց միութիւն, բարեսիրական, կրթասիրաց միութիւններ, հայրենակցական միութիւններ, որոնք տեղական բնոյթ եւ հանգամանք ունին եւ չեն զբաղիր ու պէտք չէ զբաղին քաղաքական գործունէութեամբ, որովհետեւ, տեղական հանգամանք ունենալով, չեն կրնար ազգը ներկայացնել, նկատի ունենալով նաեւ այլ յարանուանութիւններու պատկանող մեր եղբայրներն ու քոյրերը:

Հետեւաբար՝ համազգային քաղաքականութեամբ զբաղելու կեդրոնական մարմնի մը կարիքը անժամանցելի է, որ պիտի կարողանայ ներկայացնել՝ մասնաւորաբար Սփիւռքի հայութեան մեծամասնութիւնը, գիտակից պատրաստուած ղեկավարութեամբ, օժտուած նիւթական եւ բարոյական բոլոր կարողութիւններով, պահանջատիրութեան մեր դատը յառաջ տանելու համար քաղաքական բոլոր ճակատներու վրայ. դատական-իրաւաբանական, բանասիրական, եւ այլն:

Այս յայտարարութեամբ չենք փափաքիր երբեք անտեսել Սփիւռքի անհրաժեշտ գործակցութիւնը Հայաստանի պետութեան ղեկավարութեան հետ, ներկայիս ինչ որ ալ ըլլայ անոր արտասահմանեան քաղաքականութիւնը: Ի վերջոյ, որպէս մէկ անդամը Միացեալ Ազգերու Կազմակերպութեան, անիկա ենթակայ է միջազգային օրէնքի, եւ ատոր համաձայն որոշ պարտաւորութիւններ ունին որպէս պետութիւն:

Գիտակցելով հանդերձ վերեւ յիշատակուած իրողութեան, Սփիւռքը իր ձայնը ունի ու պէտք է ունենայ, եւ ո՛չ մէկ կազմակերպութիւն կամ անհատ իրաւունք չունի իւրովի եւ առանձինն ներկայացուցչական բերանը ըլլալու սփիւռքահայութեան: Կազմակերպութիւններ եւ սրտցաւ ազգայիններ, պարկեշտ հայեր իրենց ուրոյն գնահատելի տեղը ունին մեր հասարակական-ընկերային կեանքին մէջ, եւ երբեք պիտի չփափաքէինք ստորագնահատել եւ անտեսել անոնց աշխատանքը, սակայն երբ հարցը կը վերաբերի համազգային պահանջատիրութեան, լրջօրէն պէտք է մտածել հաւաքական աշխատանքի եւ մտածողութեան մասին, որ կրնայ յաջողիլ միայն ներկայացուցչական մէկ ձայնով:

Ցեղասպանութիւնը Հայ ժողովուրդին համար քաղաքական խորք ունի, որովհետեւ մագնիսի պէս կրնայ համախմբել նոյնիսկ իր արմատները մոռցած հայութիւնը: Գերազանց է անոր ույժը՝ համախմբելու Հայ ժողովուրդի բոլոր խաւերն ու հոսանքները: Ցեղասպանութիւնը կարեւոր դեր խաղացած է նաեւ սնուցանելու ազգայնական ոգի, որուն մարմնաւորումը տեսանք Ղարաբաղեան Շարժման մէջ:

Անվիճելի իրականութիւն է այն իրողութիւնը, որ Հայկական Ցեղասպանութեան հարցը միջազգային իրաւունքի հարց է այսօր, եւ անհիմն են բոլոր այն պնդումները թէ Թուրք կառավարութեան գործած անմարդկային ոճրագործ արարքները բացառապէս Թուրքիայի ներքին գործն են: Գերպետութիւններ, ինչպէս անցեալին, նոյնպէս եւ այսօր մեկնելով իրենց քաղաքական շահերէն, կը խուսափին պատասխանատուութիւն ստանձնելէ, մոռնալով մարդկային բարոյականութեան բոլոր սկզբունքները, եթէ անշուշտ մնացած է մարդկային բարոյականութիւն այս նիւթականացած աշխարհին մէջ:

Մինչեւ այսօր սփիւռքեան մեր բոլոր ջանքերը կ՛իրականանան առանձին կազմակերպութիւններու միջոցաւ, որովհետեւ սփիւռքը չունի պետական կառոյց եւ ճիշդ ատոր համար սփիւռքեան դիւանագիտութիւնը ո՛չ միայն այլազան ու բազմատեսակ է, այլ եւ յաճախ հակասական եւ իրերամերժ: Ահաւասիկ հոս է որ կարիքը կը զգացուի կեդրոնացեալ մարմնի մը, որ կարենայ համադրել բոլոր աշխատանքները, համագործակցութեամբ Հայաստանի ղեկավարութեան, եւ ներկայանալ որպէս մէկ ճակատ, աւելի զինուած ու զօրաւոր՝ միջազգային դիւանագիտական հարթակին վրայ:

Նոյնքան յոյժ կարեւոր է չմոռնալ այն բացարձակ ճշմարտութիւնը, ինչպէս վերջերս Պոսթոնի «Հայրենիք» շաբաթաթերթը կը շեշտէր, ստորագրութեամբ Կարօ Արմէնեանի, թէ «Մեր սրբավայրերը սեփականութիւններ չեն», ինչ որ առաւել եւս մեզ կը դնէ ա՛յն բարոյական սրբազան պարտաւորութեան տակ՝ ըսելու որ ո՛չ միայն մեր սրբավայրերը սեփականութիւններ չեն, այլ անոնք չեն կրնար նիւթական-դրամական սակարկութեան ենթարկուիլ եւ ո՛չ ալ ծախու կրնան ըլլալ, որովհետեւ անոնք մեր դարաւոր սրբութիւններն են, - ճարտարապետական կոթողներ, շահուած եւ շաղախուած մեր ժողովուրդի արդար քրտինքով, եւ մեր մարտիրոսներու եւ նահատակներու արիւնով սրբագործուած:

Նկատի ունենալով որ միջազգային դիւանագիտութիւնը բազմաճիւղ եւ բազմերես է, հարկ է մշակել կարեւոր յստակ ծրագիրներ: Օրինակի համար, հնարաւոր բոլոր միջոցներով աշխարհին ներկայացնել Հայկական Հարցի եւ Ցեղասպանութեան ամբողջական էութիւնը, կանխարգիլելու համար նորերը եւ ապահովել համախոհներ եւ համագործակիցներ: Եւ այս բոլորէն վեր ստեղծել այնպիսի դիւանագիտական աշխատանք, որ կարենանք չէզոքացնել թուրքական հակահայ քարոզչութիւնը որ կ՛աղաւաղէ հայուն դիմագիծն ու պատմութիւնը, եւ ապահովենք թուրք գիտակից անձնաւորութիւններ, որոնք ճշմարտութիւնը տեսնելով՝ ունին քաջութիւնը դատապարտելու թուրքական պետութեան ազգային քաղաքականութիւնը:

Երկու կարեւոր այլ ազդակներ կարիքը ունին նաեւ այս համազգային կեդրոնական մարմնին: Առաջին, նկատի ունենալով «ճերմակ ջարդը» որ լրջօրէն կը սպառնայ Հայ սփիւռքին, անհրաժեշտ է կազմակերպել գոյատեւումի զօրաւոր կռուաններ, որոնք պիտի կարենան դանդաղեցնել չարիքը: Երկրորդ, այս միութեան աշխատանքը պիտի ըլլայ արդար եւ համոզիչ քարոզչութիւն, որպէսզի համասփիւռ հայեր ներգաղթեն Հայաստան եւ Արցախ: Եւ չմոռնանք այստեղ յիշեցնելու մեր ազնիւ ժողովուրդին, որ գէթ մէկ անգամի համար միութեամբ յաջողցուցինք 100 ամեակի քայլարշաւները:

Արիւնարբու Թալէաթի՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու օրուան դեսպան Հենրի Մորկընթաուի ( H. Morgenthau, Ambassador Morgethau's Story, p. 339) կատարած հետեւեալ յայտարարութիւնը՝ «Այն ինչ որ կատարեցինք Հայերու նկատմամբ, յետ այսու անոնք չեն կրնար ըլլալ մեր բարեկամը», եւ նոյն էջին մէջ արձանագրուած յաջորդ յայտարարութիւնը եւս՝ «Հայերու եւ Թուրքերու միջեւ ներկայիս ատելութիւնը այնքան սրուած է, որ անհրաժեշտ կը նկատենք անոնց վերջը բերել: Եթէ այդպէս չընենք, անոնք պիտի ծրագրեն իրենց վրէժը»- մեր միութեան եւ արթնութեան գերագոյն կոչը պէտք է ըլլայ: Այս յայտարարութիւնները ինքնին բաւական են որ լրջօրէն մտածենք միասնական աշխատանքի մասին, որովհետեւ՝

Մէկ է հասարակաց թշնամին,
Մէկ է մեր պայքարը, եւ՝
Մէկ պէտք է ըլլայ մեր ձայնը:



# ԱՆԳԱՄ ՄԸ ՈՐ ՇՓՈԹԵՍ ԾՆՈՂՔԴ...

Պոլսոյ «Ակօս»ի թերթի երեւէջերը կը զբաղեցնեն Մուսթաֆա Քէմալի հոգեզաւակ Սապիհա Կէօքչէնի տոհմածառը, ծանօթ գրող Ալէվ Էրի յայտնաբերելու ոդիսականը: Կը ներկայացնենք սոյն գրութեան հայերէն համառօտուած տարբերակը:



Սապիհա Կէօքչէն

*Կանխաւ պէտք է խոստովանիմ, որ ներքեւի տողերը արտակարգ յայտնութիւն մը չեն: Այն ինչ որ պիտի կարդաք, քաղուած է զանազան մենագրութիւններէ կամ յուշագրութիւններէ: Հանրապետութեան երկրորդ նախագահ Իսմէթ Ինէօնիւյի Սապահաթթին Սէլէքին պատմածները, Շէվքէթ Սիւրէյիա Այտէմիրին երկար ժամանակ մեծ ժողովրդականութիւն վայելած Մուսթաֆա Քէմալի մենագրութիւնը՝ »Միակ Մարդը«, Ռաուֆ Օրպայի »Դժոխքի Ջաղացքը« խորագրեալ յուշագրութիւնները, Իտալացի պատմաբան Ֆապիօ Կրասիի՝ »Աթաթիւրքը, Թուրք-Իտալական յարաբերութիւններու քիչ ծանօթ դէպքերը« եւ »Թուրք-Իտալական խնդիրը 1919/1923: Հասարակութիւն եւ արտաքին քաղաքականութիւն- ուսումնասիրութիւնը եւ Համիթ Քայայի ակադեմական տեսութիւնները կարելի է գտնել գրատուններու կամ գրադարաններու մէջ: Պատումներուն մէկ մասը ուղղակի Մուսթաֆա Քէմալի կողմէ 1926ին Ֆալիհ Ըրֆքըյին կամ Մահմութ Սիիրտին փոխանցուած է:*

*Մօտ երկու տարի առաջ մենագրութիւններու մէջ մնացած այս մանր մունր վկայութիւնները իրարու ագուցելով փորձեցի Սապիհա Կէօքչէնի հայ ինքնութեան հետքերը որոնել: Սակայն պէտք է նշեմ, որ շատ դիւրին ճանապարհ մը չէ այս: Շատ անգամ ստիպուած եղայ դիտմամբ անտեսուածը, քօղարկուածը, աչքերէ հեռու պահուածը երեւան հանել: Օրինակի համար զինադադարի տարիներուն քաղաքը գրաւած դաշնակից զինուորներուն Մուսթաֆա Քէմալի տունը խուզարկել փորձելը, այդ փորձին անյաջող մնալը, շատեր կը պատմեն, բայց խուզարկումի պատճառին մասին ոչ ոք կը խօսի: Կը հարկադրուիմ ուրիշ աղբիւրներու դիմել:*

*Զինադադարէն անմիջապէս ետք Թուրքիոյ Հայոց Պատրիարքարանը դաշնակիցներու բարձրագոյն կոմիսարութեան եւ Օսմանեան կառավարութեան դիմելով պահանջեց 1915ի ցեղասպանութեան եւ տարագրութեան օրերուն պահ դրուած հայ որբերու փրկութիւնը: Կառավարութիւնը կոչ հրատարակեց որբերու անմիջապէս վերադարձուելուն մասին: Յայտարարեց որ հրամանին չենթարկուողները խիստ միջոցներով պիտի պատժուին: Պատրիարքարանը այս շրջագծով հինգ հազար անուններ բովանդակող ցանկ մը յայտարարեց: Անշուշտ որ իրաւ թիւը շատ աւելի բարձր էր, քանի որ շատեր այդ որդեգրուած որբերուն շնորհիւ կը յուսային անոնց վիճակած ժառանգին ալ տէր դառնալ: Պատրիարքարան եկած մատնութիւններէն մէկն ալ կը վերաբերէր Մուսթաֆա Քէմալին: Ան 13 Նոյեմբեր 1918ին Հալէպի իր զօրանոցէն եկած էր Պոլիս: Առաջին 1520 օրերուն բնակած էր Փէրա Փալաս հիւրանոցը: Իսկ Դեկտեմբերի սկիզբը վարձած էր Տիկին Յովսէփեանի Շիշլիի բնակարանը: Այդ շէնքը մինչեւ օրս կ՚օգտագործուի իբրեւ »Աթաթիւրքի Թանգարան«: Ահաւասիկ այս տունն է որ իտալական զօրամասի մը կողմէ խուզարկուիլ փորձուեցաւ, Հալէպէն բերուած հայ որբ մը գտնելու ակնկալութեամբ: Մուսթաֆա Քէմալ իսկոյն դիմեց Սուրէնեան շէնքի մէջ բնակող սպայակոյտի պետի տեղակալ Քազըմ Փաշային: Այն տեղէն կապ հաստատեց գնդապետ Ռոլէթթոյի հետ, որ կը բնակէր Շիշլիի տան անմիջապէս դիմաց գտնուող Էտհէմ Փաշա ապարանքը: Դիմումը դրական արդիւնք տուաւ եւ խուզարկելու եկած զօրախումբը հեռացաւ տունէն: Թէեւ այդ պահուն չի յայտնաբերուեցաւ պահ դրուած որբ մը, բայց այս գործողութիւնը գրանցուեցաւ միջազգային փաստաթուղթերուն մէջ:*

*17 Յուլիս 1915: Թալաթ Փաշայի ծրագրած հայկական տարագրութեան հերթը հասած է Այնթապ: Ճիպին գիւղի բնակիչ Սէպիլճեան ընտանիքն ալ մօտ 1500 հոգիէ բաղկացող կարաւանի հետ կ՚ուղղուի դէպի Հալէպ: Այնթապը այս ճամբորդութեան առաջին կայանն է, ուր ընտանիքի մայրը կը համակերպի չորս երեխաներով չես կրնար աւարտել այս ճամբան, աղջիկները հոս թող առաջարկին: Վեցամեայ Տիրուհին եւ երկու տարեկան Խաթունը կը յանձնէ Ամերիկեան Կեդրոնական Քոլէժի որբանոցին: Կարաւանը Ճիպինի երէց Տէր Ներսէս Քահանայ Պապայեանի առաջնորդութեամբ կը շարունակէ իր երթը դէպի Սուրիոյ հարաւը: Բախտաւոր պէտք է համարել այդ կարաւանը, քանի որ անոնք բազում չարչարանքներէ ետք յաջողած են վերապրիլ եւ 30 Հոկտեմբեր 1918ի զինադադարէն ետք դարձեալ Տէր Ներսէսի առաջնորդութեամբ վերադառնալ Այնթապ: Մարիամ Սէպիլճեան առաջին գործ իբրեւ կը դիմէ Ամերիկեան որբանոց: Որբանոցի պատասխանատուներէն կը լսէ որ Խաթունը փախցուած է եւ ի դէմ իրենց բոլոր դիմումներուն, կարելի չէ եղած զինք ետ բերել: Միայն լսած են որ այդ որբուկը պահ դրուած է Մուսթաֆա Քէմալ Փաշայի կողմէ:*

*Եկած է Կիլիկիոյ հայութեան ճակատագրական թուականը: 1921ի Դեկտեմբերին ֆրանսացիներ Անգարայի կառավարութեան հետ համաձայնելով ամբողջ Կիլիկիան, ներառեալ Այնթապը կը թողուն Թուրքերուն: Հայերը անգամ մը եւս կը հարկադրուին Սուրիոյ ճամբան բռնել: Մէկ անհատը պակսած Սէպիլճեան ընտանիքն ալ կը հաստատուի Հալէպի Տաւուտիյէ, կամ այժմու անունով Էշրէֆիյէ թաղամասը: Ընտանիքի հայրը*



Մուսթաֆա Քէմալ եւ Սապիհա Կէօքչէն

*Ներսէս կը մահանայ հինգ տարի ետք: Մարիամ երկրորդ ամուսնութիւն կը կնքէ երեք զաւակներով ամուրի Քարա Քարայեանի հետ: Այս ամուսնութենէն ալ որդի մը կ՚ունենայ: Մարիամ 1947ին կը մահանայ Խաթունի կարօտը սրտին:*

*Մարիամի դուստրը Տիրուհի 1946ին կ՚ամուսնանայ Սահակ Տէր Ղազարեանի հետ եւ կը ներգաղթէն Հայաստան: Նոյն տարի ծնունդ առաջին աղջիկը կը կոչէ Հռիփսիմէ: 1948ին երկրորդ աղջիկ մը կ՚ունենայ, որուն կու տայ քրոջը անունը՝ Խաթուն: Աւելի ետք երկու որդիներ ալ կ՚ունենայ:*

*Մարիամի Հալէպ ապրող եղբօրորդին Աբրահամ Կարապետեան 1955ին կը յաջողի Խաթունի հետ կապ հաստատել: Անգարա կու գայ, կը տեսակցի եւ կը նկարուին միասին: Խաթուն հսկայ գումար*



Զէհրա Այլին, Ռուքիյէ Էրքին եւ Սապիհա Կէօքչէն

*մը կը նուիրէ անոր: Աբրահամ այդ գումարին հետ կը բերէ նաեւ գաղտնիք մը: Գաղտնիք մը որ միջոց մը ետք պիտի պարզուի: Խաթունը Աթաթիւրքի հոգեզաւակ Սապիհա Կէօքչէն եղած է:*

*Թուրքիացիներ այս բոլորը լսեցին երբ Տիրուհիի դուստրը Հռիփսիմէ աշխատանք գտնելու համար Թուրքիա կու գայ եւ Հրանդ Տինքին կը պատմէ թէ Սապիհա Կէօքչէն իր մօրաքոյրն է եւ բուն անունն է Խաթուն Սէպիլճեան: Թուրքիացիներուն հազիւ Ակօսէի ու ապա Հիւրրիյէթէի լրատուութիւնով լսածը արդէն ծանօթ էր ընտանիքին Հալէպ, Պէյրութ, Լոս Անճելըս, Երեւան եւ Ֆրէզնօ ցրուած բեկորներուն:*

*Սապիհա Կէօքչէնի հայ ինքնութիւնը որոնելու ոդիսականը այսպէս սկսաւ: Լրագրող Արիս Նալճը իմ խնդրանքովս թարգմանեց Սիմոն Սիմոնեանի 1972ին «Լեռ եւ Ճակատագիրէին» մէջ լոյս տեսած պատումները: Այշէ Հիւրի, որ այս մասին ինք ալ մելան հոսեցուցած է, միջոցաւ Լոս Անճելըսաբնակ բարեկամս Գէորգէն եւս ստացայ նշեալ մանրամասնութիւնները: Փաստաթուղթերու կարիք կը զգայի: Այնթապի Կեդրոնական Քոլէժի արխիւի պատճէնը Պիլքէնթ Համալսարանի գրադարանը կը գտնուի: Սկսայ կարդալ այդ տեղէն գտած եւ 1915-1920 թուականներուն վերաբերող շուրջ 2.000 էջերը: Միակ գտածս Մուսթաֆա Քէմալի հրամանատարութեամբ եօթերորդ բանակի կից գործող տասներորդ շտեմարանի գունդին 10 Հոկտեմբեր 1917ին քոլէժը գրաւելուն մասին տեղեկագիրն էր: Կրկին դիմեցի Ռաուֆ Օրպայի «Դժոխքի Ջաղացքը» յուշագրութեան: 288-երորդ էջին վրայ կը պատմուէր խուզարկումի պատճառաբանութիւնը: Մուսթաֆա Քէմալ Փաշա կը մեղադրուէր Հալէպէն հետը բերած հայ որբ մը պահ դնելու պնդումով:*

*Նման նիւթով մը աշխատող Իփէք Ջալըշլարի յանձնարարութեամբ դիմեցի նաեւ Իսմէթ Ինէօնիւյի յուշերուն: Հոն դարձեալ հանդիպեցայ նոյն պնդումին: Այդ շրջանի հայերէն եւ օսմաներէն թերթերը սերտողները կը վստահեցնէին թէ այդ աղբիւրներու մէջ այս մասին տեղեկութիւն մը գոյութիւն չունի: Սակայն կար ուսումնասիրման կարօտ ուրիշ աղբիւր մը: Հայոց Պատրիարքարանը հիմնած եւ մէկուկէս տարի հրատարակած էր «Լա Ռէնէսէնս» անուն ֆրանսական պարբերական մը: Թուրքիոյ գրադարաններէն ոչ մէկուն մէջ հանդիպեցայ այդ թերթին: Որքան որ գիտեմ անհատական հաւաքածոներուն մէջ ալ գոյութիւն չունի: Շուրջ տարի մը տեւող պրպտումներէ ետք Փարիզի Նուպարեան գրադարանի մէջ մահամերձ վիճակի միքրօֆիլմ մը*

Շար.ը էջ 19

# ՄԻ ՊԱՅԾԱՌ, ԱՆՄՈՌԱՑ ԱՆՈՒՆ
# ՅԱԿՈԲ ՄԿՐՏԻՉԻ ԶԱՐՈԲԵԱՆ 1908-1980



*ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱՏԻԿԵԱՆ*

*Յօդուածը ցանկանում եմ սկսել Յակոբ Զարոբեանի որդու, Նիկիտա Զարոբեանի ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարեանին ուղղուած 2003թ. Սեպտեմբերի 26-ի նամակ-դիմումով: Որդին՝ Նիկիտան, նկատի ունենալով հօր ազգանուէր գործունէութիւնը, հաշուի առնելով, որ 1960-1966թթ. հայրը ջանք ու եռանդ չի խնայել Հայաստանի տնտեսութեան վերելքը ապահովելու ուղղութեամբ, ճահճի վերածուելուց փրկել է Գեղամայ լեռների հրաշքը՝ Սեւանը, խնդրում է հօր անունով կոչել Արփա-Սեւան ջրատարը:*

*Տասներկու տարի է անցել խնդրագրից, թէեւ այն ամենայն լրջութեամբ պէտք է որակել պահանջ, սակայն ՀՀ իշխանութիւնները երբեմն անյարիր անուանակոչումներ են կատարում, սակայն երբեք չեն մտաբերում, որդու պահանջը:*

*1925թ. Խարկովում Յակոբ Մկրտիչի Զարոբեանը ընդունւում է կոմերիտմիութեան շարքեր: Ոգեւորութիւնը սառեց, երբ տանը բաց արեց տոմսը եւ տեսաւ, որ իրեն նոր անուանակոչում են տուել՝ Յակով Նիկիտիի Զարոբեան: Զփորձեց ուղղել սխալը եւ կուսակցական կեանք մտաւ իր նոր անունով: Փայլուն կենսագրութիւն ձեւաւորեց՝ սեւագործ բանուոր, խառատ, բազմատիրաժ թերթերի խմբագիր, 1932թ. ԽՄԿԿ անդամ, Խարկովի գործարաններից մէկի կուսկոմիտէի, նոյն քաղաքի շրջաններից մէկի քարտուղար, ապա Օմսկ, 1941-1945թթ. պատերազմի տարիներին քրտնաջան աշխատանք եւ վերջապէս 1949թ. ԽՄԿԿ ԿԿ Ապրիլի 15-ի որոշմամբ գործուղւում Հայաստան:*

*Իսկ մինչ այդ, 1946թ., Յակոբ Զարոբեանը կատարեց կեանքի ամենապատասխանատու ընտրութիւնը: Նա ամուսնացաւ Գարեգին Նժդեհի համագիւղացի, կլզնուցի Արթենիկ Թարայեանցի հետ:*

*1949-1960թթ. Յակ. Զարոբեանը, Հայաստանում 11 տարուայ ընթացքում աշխատեց չափազանց կարեւոր բնագաւառներում: Նրա անձնուէր աշխատանքը յատկապէս ակնառու էր Գիւմաշի ՀԷԿ-ի, Երեւանի էլեկտրոլամպերի գործարանի, Քաջարանի պղնձամոլիբդենային եւ Լենինականի տեքստիլ գործարանի գործարկման, վերակառուցման, նոր հզօրութիւնների ներդրման բնագաւառներում: Յատկապէս անգնահատելի է նրա դերակատարութիւնը փառապանծ Մերգելեան գիտահետազօտական ինստիտուտի հիմնադրման ու գործարկման ուղղութեամբ:*

*1953թ. երբ Յակ. Զարոբեանը արդէն ՀԿԿ ԿԿ քարտուղար էր, նրան առաջարկուեց առաջին քարտուղարի պաշտօնը: Միշտ հաւասարակշիռ ու պատասխանատուութեան մեծ զգացում ունեցող արդէն 45 տարեկան ԿԿ-ի քարտուղարը պատճառաբանելով, որ դեռեւս ամբողջովին ծանօթ չի հանրապետութեանը, դեռեւս մտորումների ու ծրագրերի մշակման անհրաժեշտութիւն ունի, հրաժարուեց առաջարկից:*

*Սակայն մօտենում էր յիշարժան տարեդարձը՝ ՀԽՍՀ կազմաւորման 40-ամեակը, եւ 1960թ. Դեկտեմբերի 28-ին ՀԿԿ ԿԿ արտահերթ պլենումը Յակ. Զարոբեանին ընտրեց ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար:*

*Խ. Հայաստանը դանդաղ, բայց հաստատուն քայլերով ամրապնդում եւ հզօրացնում էր տնտեսութիւնը: Արդիւնաբերական նոր ճիւղեր էին հիմնւում, կառուցւում էին նոր գործարաններ ու ֆաբրիկաներ: Հանրապետութիւնը բաց ճակատով ընդունեց մէկ տարի ուշացումով Հայաստան ժամանած Խրուշչովին: Ա. Միկոյեանը նախօրօք զանգահարել եւ Զարոբեանին զգուշացրել էր, որ կառավարութեան ղեկավարը բժիշկների հսկողութեան տակ է, որ նրան պէտք է հեռու պահել ալկոհոլային խմիչքներից եւ ամենակարեւորը՝ քանի որ Խրուշչովը եգիպտացորենի մշակութեան ջերմ ջատագով է, Ա. Միկոյեանը խորհուրդ է տալիս նրան Արարատեան դաշտ չտանել, խուսափելով դաշտի այգեգործութիւնը վտանգելու հեռանկարից, հակառակ դէպքում այգիների փոխարէն վեր կը բարձրանային եգիպտացորենի պլանտացիաները:*

*Խրուշչովի ամայի, քարքարոտ, անհրապոյր վայրերով շրջագայութիւնը աւարտուեց Սեւանում: Գեղամայ գեղեցկուհին գերեց ռոմանտիկ ղեկավարին: Ջուրը այնքան պարզ էր, մաքուր, որ Խրուշչովը նկատելով իր կողմից ջուրը նետած կոպեկը, հիացմունքով բղաւում է՝ «Տեսէ՛ք, տեսէ՛ք, կոպեկն անգամ երեւում է»: Զարոբեանը, ճիշտ է, ձայնակցեց երկրի ղեկավարի հիացմունքին, սակայն տրտմեց: Դա նկատեց Խրուշչովը եւ հարցրեց՝ «Ինչո՞ւ տխրեցիր...»:*

*Տխրեցի, որովհետեւ, երբ յաջորդ անգամ գաք, լիճը այլեւս չի լինի, նա կը վերածուի ճահճի...*

*Ինչո՞ւ, ինչպէ՞ս...*

*Նիկիտա Սերգեեւիչ, արդիւնաբերութեան զարգացումը հոսանք է պահանջում, մենք էլ բացել ենք լճի դարպասները եւ աշխատեցնում ենք էլեկտրոկայեանները:*

*Իսկ ի՞նչ կարելի է անել, որ պահպանուի այս հրաշքը:*

*Միակ ելքը թունելով Արփա գետի ջրերը Սեւան հասցնելն է: Հանրապետութիւնը, սակայն զուրկ է այն իրագործելու հնարաւորութիւնից:*

*- Ահա թէ ինչ..., -ասելով Խրուշչովը մտորումների մէջ է ընկնում եւ սթափուելով ասում, - Յակոբ, դիմէք Մոսկուա, ես կը պաշտպանեմ Ձեզ...*

*Ահա այսպէս, թունելի շինարարութեան հետ կապուած հեքիաթները ժխտելով, հպարտօրէն կարող ենք փաստել, որ Սեւանի փրկութիւնը Զարոբեանի ճկուն դիւանագիտական, խելացի քաղաքականութեան արդիւնքն էր: 1961թ. Օգոստոսի 12-ին ԽՍՀՄ կառավարութիւնը հաստատեց «Արփա գետի ջրերի մի մասը Սեւանայ լիճ տեղափոխելու, նրա մակարդակը բնականին մօտ նշակէտում պահելու նպատակով իրականացուող միջոցառումների» մասին թիւ 726 որոշումը:*

*1963թ. սկսուեցին պայթեցման աշխատանքները: Ափսոս, որ խարդաւանքների պատճառով Հայաստանից հեռացած, անժամանակ մահուան (1980թ.) պատճառով, հայ ժողովրդի մեծ նուիրեալը չտեսաւ Արփայի գրկախառնումը Սեւանի վճիտ ջրերին, բայց նրա մեծ նուիրումը յաւերժ կը հիշուի հայութեան բոլոր սերունդների կողմից: Ահա թէ ինչու նոյնիսկ անյապաղ է Արփա-Սեւանը մեծ նուիրեալի անունով կոչելը, դա մեծ հայրենասէրի յիշատակի յաւերժացման լաւագոյն քայլը կը լինի նաեւ:*

*1908թ. Սեպտեմբերի 29, հայոց Արդուին քաղաքում ծնուեց Յակոբ Մկրտիչի Զարոբեանը: Նա ընտանիքի չորրորդ զաւակն էր: Խաղաղ եւ հինաւուրց Արդուինը շուտով դառնալու էր առաջին աշխարհամարտի թատերաբեմերից մէկը: Հայրը՝ Մկրտիչը, կանխազգալով չարագուշակ ապագան, 1914թ. ընտանիքով տեղափոխւում է Պաթում, ապա Դոնի-Ռոստովի Նախիջեւան քաղաք, որտեղ էլ կնքում է իր մահկանացուն: Ընտանիքի հոգսը մնաց բազմազաւակ մօր եւ աւագ որդու վրայ: Վերջինս, չդիմանալով աշխատանքային ծանր պայմաններին, հիւանդացաւ: 10-ամեայ Յակոբը փոխարինեց նրան, դարձաւ կօշկակարի աշակերտ, միաժամանակ սովորեց հայկական քառամեայ դպրոցում: 1922թ. նրա ընտանիքը տեղափոխուեց Ռոստով, իսկ 1925թ. Ուկրաինայի Խարկով քաղաք:*

*Վեցամեայ Յակոբը ականատեսն ու վկան դարձաւ հայրենազրկուած ու ցեղասպանութիւնից վերապրած իր հայրենակիցների անլուր տառապանքին: Հոգեբանական այդ գործօնը ուղեկցեց նրան ողջ կեանքում:*

*Յետագայում Ուկրաինայում, Ռուսաստանի դաշնութիւնում պաշտօնավարելիս նա անընդհատ հանդիպում էր իր դժբախտ հայրենակիցներին: Նա այդ ամէնի նկատմամբ ունէր իր հիմնաւոր պատասխանը:*

*1960-ական թուականների ազգային զարթօնքը համակել էր ամբողջ հանրապետութիւնը: Զարոբեանը չէր կարող անտարբեր լինել ժողովրդի ցասման, արդարութեան պահանջների նկատմամբ եւ համարձակօրէն առաջ մղուեց Հայոց ցեղասպանութեան 50-ամեակը արժանիօրէն նշելու աշխատանքներին: Յաղթահարել Սուսլովի, իւրաքանչիւր առաջարկի նկատմամբ բացասական դիրքորոշում ունեցող Պոդգոռնու, Խրուշչովի՝ այդպիսի հարցերում զգուշաւորութեան, Բրեժնեւի՝ վտանգը իրենից հեռացնելու բնաւորութեան, Միկոյեանի զգուշաւորութեան պատնէշները, մեծագոյն խիզախում էր պահանջում: Դեռեւս 1964թ. Նոյեմբերի 14-ին ՀԿԿ ԿԿ նախագահութիւնը Զարոբեանի զեկուցման հիման վրայ ընդունում է «1915թ. հայերի զանգուածային բնաջնջման 50-ամեակի կապակցութեամբ իրականացուող միջոցառումների մասին» ԽՄԿԿ ԿԿ-ին ուղղուած նամակը: Խրուշչովի արգելքը յաղթահարելուց յետոյ, նա ընդունելութիւն խնդրեց Բրեժնեւից: Համապատասխան փաստաթղթերի փաթեթով Զարոբեանը Բրեժնեւին համոզում է աշխարհասփիւռ հայութեան պահանջի արդարացիութիւնը: Ի վերջոյ Լէոնիդ Իլյիչը ԿԿ բիւրոյում հարցը քննելու համաձայնութիւն է տալիս: Գրեթէ յուսահատ վիճակ էր ստեղծուել Զարոբեանի համար: Նրա միակ յոյսը Իլիչովն էր: Եւ հիւրանոցի նախասրահից գնած «Պրաւդա» թերթը մեքենայի մէջ զննելիս, նա հանդիպում է մի հաղորդագրութեան, որը յայտնում էր, թէ Անքարայում թուրք ազգայնամոլները յարձակուել են ԽՍՀՄ դեսպանութեան վրայ, պատճառել զոհեր: Առիթը պէտք էր օգտագործել: Այն պահին, երբ Զարոբեանի ելոյթը ընդհատած Բրեժնեւը յայտարարում է, թէ ԽՍՀՄ-ը եւ Թուրքիան բարի դրացիական յարաբերութիւններ են պահպանում, Զարոբեանը նրան է յանձնում «Պրաւդա» թերթը: ԿԿ բիւրոյի նիստը ընդհատւում է եւ Բրեժնեւը ԱԳ նախարարութիւնից բացատրութիւն է պահանջում: Այն հաստատում է յիշեալ հաղորդագրութիւնը եւ նիստը հաւանութիւն է տալիս Զարոբեանի ելոյթին եւ որոշում թոյլատրել Ապրիլի 24-ի միջոցառումը՝ սգոյ հանդիսաւոր նիստ, Ապրիլի 24-ը պետականօրէն ճանաչել որպէս Հայոց ցեղասպանութեան յիշատակի օր, Երեւանում յուշակոթողի կառուցում: ԿԿ բիւրոն մերժեց Լենինի հրապարակում ՀԽՍՀ դրօշի խոնարհման ենթակէտը:*

*Միշտ զգոյշ դիւանագիտութեան կողմնակից Գրոմիկոն «խնդրում է» տարածքային պահանջներ չներկայացնել:*

*Այսպիսով 50-տարի անց, թոյլատրելով Հայոց ցեղասպանութեան յիշատակի օր սահմանելու, ՀԽՍՀ կողմից ցեղասպանութեան ճանաչումը, ԽՍՀՄ-ը փաստօրէն, 1965 թ. ճանաչում էր Հայոց ցեղասպանութիւնը: Մեծագոյն նուաճում էր Զարոբեանի գործած սխրանքը: Դիւանագիտական փաստից բացի, Զարոբեանի հերոսական գործունէութիւնը ամրագրեց հայ ազգային գաղափարախօսութեան, Հայկական հարցի գոյութեան փաստը, արդար հատուցման անհրաժեշտութիւնը:*

*Մեծագոյն մի պարտականութիւն, որը իրականացրեց որպէս ռուս (իր խօսքերն են) հայրենիք եկած, ճակատագրի բերումով հայրենիքից հեռու օտարախօս դարձած մի զտարիւն հայ, որը յետոյ, երբ իւրայինների դաւադրութեան պատճառով հեռանում էր, հպարտօրէն յայտարարեց. «Ես որպէս հայ եմ հեռանում»:*

*1966թ. Փետրուարի 5-ին ԽՄԿԿ ԿԿ քարտուղար Ի. Կապիտոնովի մասնակցութեամբ գումարուեց ՀԿԿ ԿԿ պլենում: Այն «ձգձգուեց» ընդամէնը 15-17 րոպէ: Զարոբեանը*

*Շար.ը էջ 19*

# ՊԱՏՄՈՒԱԾՔ
## ԲԱՂՐԱՄԵԱՆ ՊՈՂՈՏԱՅ, ԹԻՒ »»...««

*ԳԱԳԻԿ ՇՈԼԻՆԵԱՆ*

...Ամառ է ու շատ շոգ, երեւանեան շոգ: Տաք ասֆալտն անցորդներին մղում է դէպի ցայտաղբիւրը: Մեծերն ու տղամարդիկ իրենց հերթը զիջում են երեխաներին ու կանանց: Հերթն ուսանողին հասաւ, կռացայ դէպի ծորակը: Դեռ ջուր չէր խմել, մէկ էլ կողքից դէպի իրեն մի անծանօթ ջերմութիւն եկաւ, եկաւ ու ամբողջովին պարուրեց իրեն: Մի կողմից այն հաճելի զգացողութիւն բերեց, միւս կողմից էլ այն աւելանալով ասֆալտից անդրադարձող տաքութեանը, իր մօտ թթուածնային կարճատեւ քաղց առաջացրեց: Թեթեւ գլխապտոյտը յաղթահարելով նա դանդաղ յետ քաշուեց ծորակից ու գլուխը վեր բարձրացնելուն զուգահեռ սկզբից տեղում անհանգիստ շարժւող գեղեցիկ ոտքեր տեսաւ, յետոյ մարմինն ընդգծող կանաչ շրջազգեստ, յետոյ էլ...

Յետ քաշուեց ծորակից ու քանի որ խօսելու ընդունակութիւնը դեռ չէր վերականգնուել, ձեռքով ջրից օգտուելու հրաւէրք կատարեց: Ջուրը խմելուց յետոյ աղջիկը շնորհակալական ժպիտ նուիրեց իրեն ու հեռացաւ:

- Չես սպասի՞,

- մինչ ցայտաղբիւրից ջուր խմելը հասցրեց ասել նա հեռացող աղջկան: Դէպի կանգառ քայլող աղջիկը չպատասխանեց, բայց նկատելիօրէն դանդաղեցրեց քայլերը: Ցայտաղբիւրն ասեց.

- Արագացրու, գնում է: Մօտակայ խանութի ցուցափեղկում դարսուած մրգակոյտի վրայ հպարտօրէն բազմած ոսկեգոյն ծիրանն աչքով արեց իրեն.

- Լաւիկն է, հասի: Աղջիկն աւտոբուս բարձրացաւ: Ուսանողը մօտեցաւ աւտոբուսին ու ափսոսանքով կանգ առաւ.

- պէտք է հիւանդանոց գնալ, այսօր հօրը վիրահատում են: Պատուհանից նրան նայող աղջիկը նազանքով գլուխը այնպէս թափահարեց, որ ձախ ուսի վրա թափուած երկար մազերն ալեկոծուեցին, բարձրացան վեր ու ընդհանուր հրահանգին հլու համատեղ ճախրելով վայրէջք կատարեցին աջ ուսին: Յետոյ նեղացկոտ հայեացքով նայեց ուսանողին, ուռեցրեց այտերը, լեզու ցոյց տուեց նրան ու շրջուեց: Երբ ներս մտաւ, հայրը հիւանդասենեակում անհանգիստ յետ ու առաջ էր քայլում.

- Պատմիր, ինչպէս են գործերը: հայրը հարցական նայեց ուսանողին:

-Այսօր երեկոյեան սկսում ենք, հօրից նա գաղտնիք չունէր, քանի որ իրենց յարաբերութիւններն աւելի քան ընկերական էին: Գաղտնի գործողութեան պլանին ծանօթանալուց յետոյ հայրը մի շարք ուղղումներ մտցրեց առաջարկելով օգտագործել նաեւ իր մշակած արագ իրագէկման սխեման: Ընկերները զարմացած եւ հիացած էին.

- դա այն էր, ինչը պակասում էր պլանին: Ուսանողը եւ ընկերներից իւրաքանչիւրը պէտք է ընտրէին 5 վստահելի մարդու, բացատրէին նրանց գործողութեան իմաստը, կատարման վայրը եւ ժամը: Ոչ մի դէպքում իրենք չպէտք է շեշտեն, որ իրենք են կազմակերպիչներն, այլապէս ընթացքում հեշտութեամբ կը բացայայտուեն ու կը մեկուսացուեն: Այդ անձանցից իւրաքանչիւրը իր հերթին նոյն իրագէկումը պէտք է կատարի իւրաքանչիւրն իր շրջապատի 10 վստահելի մարդու հետ եւ այդպէս շարունակական: Այդ ամէնը պէտք էր կատարել հնարաւորինս սեղմ ժամկէտում: Իրագէկման սկիզբը տրուել էր մէկ շաբաթ առաջ, այսօր երեկոյեան սկսուելու էր բուն գործողութիւնը: Հիւանդասենեակ մտած բժիշկը յայտնեց, որ վիրահատութիւնը կը սկսեն մէկ ժամից: Ուսանողը բժշկից իմացել էր իսկութիւնը.

-յաջող վիրահատման հաւանականութիւնը 50% էր: Խնդրել էր հօրն այդ մասին չյայտնել: Նոյնն իմացել էր նաեւ հայրը, բժշկին իր հերթին խնդրելով որդուն այդ մասին չյայտնել:

- Ասեմ, որ քո տեղը ընկերներիդ մօտ է՝ մէկ է, չես գնալու. - հայրը իր սպասուելիք վիրահատութիւնը մոռացած մտահոգուած հայեացքով ուսանող տղային էր նայում:

- Մի անհանգստանայ, տղաները հասկացողութեամբ են վերաբերւում մեր վիճակին: Վիրահատութեան աւարտից եւ քո մօտ վիճակի կայունացումից յետոյ, իսկ դա՝ ըստ բժշկի նախնական կանխատեսման, կը լինի առաւօտեան ժամի 04-ի կողմերը, կը միանամ իրենց: Հօրը տարան վիրահատարան: Ուսանողը ընկերոջից զանգ ստացաւ.

- Ուզում էինք հիւանդանոց այցելել, բայց տանը սպասուածից շատ հիւրեր ունենք, ներողամիտ եղիր, այս պահին տեղափոխման հարցն ենք քննարկում.

- հասկացայ, որ սկիզբը յաջող է ընթանում:

- Վիրահատութիւնը լաւ աւարտուեց: Վիրահատարանից դուրս եկած բժիշկն անխօս ու անաղմուկ նստել էր մտքերի մէջ խորասուզուած ուսանողի կողքին.

- պրոֆիլակտիկայի համար մէկ ամիս յետոյ անհրաժեշտ կը լինի քիմիոթերապիայի մէկ կուրս, եւ երաշխաւորում եմ, ձեր հայրիկը կը լինի լիակատար առողջ:

Գիշերը ժամի 04-ին կարող ես իրեն 5 րոպէի սահմանում տեսակցել: Ամուր մարդ է Քեռին: Քեռին ուսանողի հօր մականունն է: Այդպէս են ասում նրան հարեւանները, ճանաչող - չճանաչողները: Խորհրդային տարիներին, երիտասարդ ժամանակ, գարեջրի գործարանում վարորդ է աշխատել: Յետոյ հեռակայ բարձրագոյն կրթութիւն ստանալով անցել է ինժեներական աշխատանքի: Բոլորի հանդէպ հոգատար վերաբերմունքը ու կնճռոտ հարցերի ճիշտ հանգուցալուծում գտնելու նրա ընդունակութիւնն է եղել պատճառ համընդհանուր Քեռի դառնալու համար:

Երբ մօտեցաւ, հայրը քնած էր դէմքին թեթեւ ժպիտի նշանով: Յետոյ, օրեր անց, նա կասի, որ զգացել է որդու ներկայութիւնը: Ուսանողը դուրս եկաւ, տաքսի նստեց: Տաքսիստը յայտնեց. -Բաղրամեան պողոտայում լարուած վիճակ է, ոստիկանութիւնը պատրաստւում է յատուկ միջոցների կիրառմամբ ցրել ցուցարարներին: Ֆրանսիայի հրապարակից ոտքով շարժուեց դէպի Բաղրամեան պողոտայ: Քիչ հեռւում երեւում էին նստացոյցի անցած միտինգաւորները: Մէկ էլ բարիկադների այն կողմից ջրի հզօր շիթեր տեղացին միտինգաւորների վրայ: Ջրի շիթերի հարուածներից կանգնածները տապալուեցին գետնին, նստածները շպրտուեցին մի քանի մետր: Գետնին ընկածների մի մասն ուժ գտաւ իր մէջ, ոտքի կանգնելով՝ բռունցք ու մատ պարզեցին ոստիկանական ուժերի ուղղութեամբ: Ջրի հզօր շիթային հարուածը կրկին ու կրկին նրանց գետին տապալեց: Մի քանի րոպէ անց միտինգաւորներն ուժասպառ եղան: Նրանցից ոչ ոք չէր կարողանում ասֆալտի վրայից բարձրանալ:

Ոստիկանների պաշտպանիչ շարքը բացուեց եւ բացուածքից դէպի ուժասպառ միտինգաւորները վազեցին ոստիկանական եւ քաղաքացիական հագուստով աշխատակիցներ: Նրանք մօտենալով ընկած, ուժասպառուած միտինգաւորներին, մի քանի հոգով վերցնում էին մէկին, քարշ տալիս դէպի յատուկ մեքենան ու բեռնում՝ շպրտելով թափքի մէջ:

Ուսանողը վազեց դէպի իրադարձութիւնների կենտրոն: Մինչեւ բուհ ընդունուելը նա ծառայել էր բանակում: Ծառայութեան ընթացքում նրա ֆիզիքական լաւ տուեալների եւ արեւելեան մար-

Շար.ը էջ 20

# ՆԱՐ-ԴՈՍ 1867-1933

*ԱՆԻ ԹՈՐԱՆԵԱՆ*

ԺԹ. դարավերջին եւ քսաներորդ դարասկիզբին ստեղծագործող մեծանուն հայ վիպասանը ծնած է Թիֆլիս, 1867 թուականի Մարտ մէկին: Վախճանած է 1933-ի Յուլիս 13-ին՝ դարձեալ Թիֆլիս: Նար-Դոսի ստեղծագործութեան հիմնական առանցքը՝ իր զգացական ու բարոյական յատկութիւններով, մարդն է:

Անոր բնորոշ է արդիականութեան սուր զգացողութիւնը, գեղարուեստական ճաշակն ու վարպետութիւնը: Նար Դոսի լեզուն իր ժամանակներու հայերէնի բարձրակէտն է, իսկ ստեղծագործութիւնը, հայ արձակի նոր աստիճան: Հայրը բրդավաճառ էր: Կրթութիւնը ստացած է նախ Սուրբ Կարապետ եկեղեցւոյ ծխական դպրոցին մէջ, այնուհետեւ քաղաքային Նիքոլաեւեան երկ դասեայ դպրոցին մէջ: Աւելի ուշ՝ ընդունուած է Քութայիսի Նահանգի Խոնի ուսուցչական դպրանոցը, սակայն, ապրուստի միջոցներ չունենալու պատճառով առանց աւարտելու վերադարձած է Թիֆլիս: Շրջան մը ետք փականագործի մասնագիտութիւն սորված է Միքայէլեան արհեստագործական դպրոցին մէջ, ուր մտերմացած է ապագայ բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրեանին հետ:

Տարի մը ետք, Միքայէլեան դպրոցը ձգելով՝ նուիրուած է լրագրական ասպարէզին: 1890-1906-ին ան արդէն «Նոր դար»-ի պատասխանատու քարտուղարն էր: 1904-ին դրաձեալ որպէս քարտուղար, առաւել՝ սրբագրիչ, աշխատած է «Աղբիւր-Տարազ» պարբերականին մէջ... Խորհրդային կարգերու հաստատումէն ետք որոշ ժամանակ շարունակած է սրբագրիչի աշխատանքը:

1931-ի Յունիս 14-ին մեծ շուքով տօնած են գրողին գրական գործունէութեան 45-ամեակը եւ անոր շնորհուած է Վրաստանի ժողովրդական գրողի կոչում:

Նար-Դոսի ստեղծագործական կեանքը սկսած է ԺԹ. դարու 80-ական թուականներէն: Նախ բանաստեղծութիւններ գրած է, որոնցմէ մի քանին 1883-1888 թուականներուն լոյս տեսած են «Արաքս» հանդէսին եւ «Սոխակ Հայաստան»ի ժողովածոյին մէջ, այնուհետեւ պատմուածքներ:

Իր գործերուն մէջ Նար-Դոս իր բարոյական տեսակէտը առաջադրած է, ստեղծած է կերպարներ, որոնք իրենց հասարակական պարտքը կատարելու գիտակցութեամբ զոհած են իրենց անձնականը: Գրողին նախասիրութիւնը կ'երթայ քաղաքային կեանքին:

Խաւարի եւ թշնամութեան մթնոլորտի մէջ չարիք կը գործեն սնահաւատութիւնը, տգիտութիւնը («Սաքուլն ուխտ գնաց», «Ինչպէս բժշկեցին»), վայրագութիւնը, կոպտութիւնն ու գինեմոլութիւնը: Հեղինակը մանկութիւն չունեցող երեխաներ կը պատկերէ, կիներ, որոնց բաժինը հանապազօրեայ հացին հոգն ու ծանր աշխատանքն են:

Անոր իւրաքանչիւր պատմուածք իրական ողբերգութիւն է: Այդ շրջանի գործերէն է «Աննա Սարոյեան» վիպակը, որուն մէջ հեղինակը ընտանիք մը կը ներկայացնէ, որուն անդամները իրենց հօր սնանկութենէն ու մահէն ետք կեանքի փորձութիւններուն չդիմանալով, ի վերջոյ, կը կործանին: բիպակի հերոսուհին՝ Աննա, ընկերային մեծ խաւի մը ողբերգութիւնը կը ներկայացնէ:

1891-էն սկիզբ կ'առնէ Նար-Դոսի ստեղծագործութեան մէկ այլ շրջանը, որուն յատուկ է հոգեբանական վերլուծութեան խորութիւնը: Այս շրջանի գործերուն էութիւնը մարդու եւ մարդկայինի հիմնահարցն է՝ դիտուած բարոյական եւ ընկերային տեսանկիւններէ: Մարդու մասին ունեցած իր բարձր ըմբռնումը Նար Դոս կը հակադրէ սեփականատիրական աշխարհի դաժան օրէնքներուն: «Սպաննուած աղաւնի» վիպակին մէջ ան պատկերած է հայ կնոջ ողբերգութիւնը: Սակայն Սառա (գլխաւոր հերոսուհին) կը կործանի ոչ թէ համակերպելով, ինչպէս հեղինակին միւս հերոսուհիները, այլ մարդկային արժանապատուութեան բարձր գիտակցումով բողոք ներկայացնելով ոչ միայն իր անունէն, այլեւ բոլոր անոնց, որոնք հասարակութեան մէջ դատապարտուած են:

Նար-Դոսի լաւագոյն ստեղծագործութիւններէն է «Պայքար» վէպը: Գրողը ընկերային խնդիրներ շօշափած է, կեանքի մեծ ու փոքր ողբերգութիւններ պատկերած է, ներկայացուցած է մարդկային հոգիի անտեսանելի ծալքերը եւ օրհասական պայքարը: Այս վէպին մէջ Նար-Դոս կը հակադրուի հին գրական կաղապարներուն եւ միանգամայն տարբեր ու նոր ձեւեր կ'առաջադրէ: Այստեղ միահիւսուած են հոգեբանական ու երգիծական սկզբունքները եւ առկայ է ժամանակակից կեանքի խիստ քննադատութիւն:

1880-ական թուականներու հայ մտաւորականութեան կենցաղն ու հասարակական պատկերը շատ աւելի լայն ու խորունկ դրսեւորուած են «Մահը» վէպի մէջ:

Նար Դոս կեանքը ժողովուրդին նուիրաբերելու երազային ձգտումները կը հակադրէ եսամոլութեան ու շահամոլութեան: «Մահը» բազմաբովանդակ ստեղծագործութիւն է՝ լի հանգուցային բարդ իրադարձութիւններով: Վէպը ոչ միայն հեղինակի, այլեւ հայ քննադատական իրապաշտութեան բարձրագոյն նուաճումներէն կը համարուի...

## Ի՞ՆՉ ԿՐՆԱՅ ՓՈԽՈՒԻԼ, ԵԹԷ ՍԿՍԻՔ ԹԷՅԸ ԽՄԵԼ ԱՌԱՆՑ ՇԱՔԱՐԻ

*Նախ նշենք, որ շաքարը ինքնին չարիք չէ: Խնդիրը այն է, որ շաքար կ'աւելցուի գրեթէ բոլոր ուտելիքներուն մէջ: Մեր մարմնին մէջ շաքարի աւելցուկը կը պատճառէ մշտական յոգնածութիւն, աւելորդ կշիռք, գրգռուածութիւն եւ, նոյնիսկ, ճնշախտ:*

*Երկրորդ՝ դուք չէք կրնար շաքարէն ընդհանրապէս հրաժարիլ: Թէկուզ այն պատճառով, որ խանութներուն մէջ առկայ բոլոր վերամշակուած ուտելիքները այսպէս, թէ այնպէս, շաքար կը պարունակեն: Սակայն դուք կրնաք հրաժարիլ սուրճի կամ թէյի մէջ շաքարի օգտագործումէն, եւ ատիկա հրաշալի որոշում կրնայ ըլլալ:*

*Հինգ առաւելութիւն, որոնք այդ պարագային պիտի ստանաք.*

*1. Դուք պիտի դառնաք աւելի շարժունակ: Մեզմէ շատերը, երբ յոգնած ու ջարդուած կը զգան, քաղցր սուրճ կը խմեն եւ, հաւանաբար, որեւէ քաղցր բան կ'ուտեն: Ոմանք ալ ուժ տուող ըմպելիներ կը նախընտրեն: Սակայն այդ սովորութիւնը, իրականութեան մէջ, ձեզմէ ուժ կը խլէ եւ ոչ թէ կու տայ: Սկզբունքը հետեւեալն է. երբ քաղցր կը խմէք կամ կ'ուտէք, արեան մէջ ակնթարթօրէն կ'աւելնայ շաքարի մակարդակը, եւ դուք ուժի ներհոսք կը զգաք: Սակայն այդ ազդեցութիւնը շուտ կ'անցնի՝ շուրջ 15 վայրկեան անց: Եւ դուք կրկին յոգնածութիւն եւ գրգռուածութիւն կը զգաք, ընդ որուն՝ աւելի ուժգին, քան առաջ:*

*Այս փակ շրջանը խզել կարելի է միայն մէկ ձեւով. օգտագործել քաֆէին, սակայն առանց շաքարի: Այդ պարագային մարմնի մէջ եղած շաքարի մակարդակի վերիվայրումները չեն փճացներ ձեր տրամադրութիւնը եւ կենսունակութիւնը չեն նուազեցներ:*

*2. Ձեր կշիռքը կը կարգաւորուի. Այստեղ նոյնպէս գործ ունինք փակ շրջանի հետ: Եթէ դուք որեւէ քաղցր բան կերած էք, կարճ ժամանակ անց մարմինը կրկին պիտի պահանջէ: Ընդ որուն, պիտի պահանջէ աւելի «յարձակողական» կերպով, քան առաջ: Այս է պատճառը, որ գիտնականները կ'ըսեն, թէ շաքարը, թմրանիւթի նման, կախեալութիւն կը յառաջացնէ:*

*Բոլորին յայտնի է, որ շաքարը ախորժակ կը բանայ: Որքան քաղցր ուտէք, այնքան շուտ պիտի ուզէք կրկին ուտել: Փորձեցէք թէյը խմել առանց շաքարի եւ քաղցրեղէնի, պիտի նկատէք, որ կտրած էք այդ փակ շրջանը:*

*3. Ձեր ստամոքսը երկու անգամ աւելի արդիւնաւէտ պիտի աշխատի. Շաքարը վնասակար է, իսկ բջիջանիւթը՝ օգտակար: Եթէ դուք քաղցրեղէնը փոխարինէք միրգերով ու բանջարեղէնով, իսկ թէյն ու սուրճը սկսիք խմել առանց շաքարի, աղեստամոքսային համակարգը ձեզմէ շնորհակալ պիտի ըլլայ: Նիւթա - փոխանակութիւնը պիտի արագանայ, եւ դուք արագ պիտի վերադառնաք բնականոն կեանքի:*

*4. Պիտի դադրիք կրքոտութեամբ քաղցրեղէն ուզելէն. Փաստ է. որքան շատ շաքար ուտէք, այդքան շատ պիտի փափաքիք ուտել զայն: Կրկին ու կրկին: Վերջ ի վերջոյ՝ այդ փակ շրջանը կրնայ փշրել ձեր կեանքը: Սկզբունքը նոյնն է, ինչպէս թմրանիւթերու պարագային. որպէսզի հաճոյք ստացուի, պէտք է մեծցնել չափաբաժինները:*

*Բացառեցէք շաքարը տաք խմիչքներէն եւ պիտի նկատէք, որ աւելի քիչ քաղցրեղէն սկսած էք ուտել: Քանի մը ամիս ետք, պիտի ապշիք. երբեմնի համեղ թուացող քաղցրեղէնները չափէն աւելի քաղցր պիտի թուին:*

*5. Ձեր մորթը աւելի առողջ տեսք պիտի ունենայ. Բշտիկները եւ սեւ կէտերը աստիճանաբար պիտի վերանան: Քանի մը ամիս անց դուք պիտի դադրիք մաշկի համար այդքան շատ քսուքներ գնելէ: Որքան շուտ սկսիք վարժուիլ նոր սովորութիւններուն, այդքան շուտ պիտի սկսիք քաղել ձեր յաջողութեան պտուղները:*

*Առողջապահութեան Համաշխարհային Կազմակերպութեան տուեալներով՝ մենք շաքարի տեսքով պէտք է ընդունինք օրական անհրաժեշտ ջերմուժի ոչ աւելի, քան 5%-ը: Սկսինք քիչով: Ուշադրութիւն դարձուցէք ձեր կերածին ու խմածին վրայ: Անոնց մէջ շաքարի պարունակութեան: Հրաժարեցէք այն ամէնէն, որմէ կարելի է հրաժարիլ: Կ'անցնի շատ քիչ ժամանակ, եւ դուք կը վարժուիք:*

## ԻՐԱՆԻ ՀԵՏ ՀԻՒԼԷԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ԾԱԼՔԵՐԸ

*Շարունակուածէջ6-էն*

*երկրորդ դասուող երկիրն է կազի պաշեստով, երկրին մէջ 1980-էն 1988-ի միջեւ տագնապը առիթ չտուաւ որ նաֆթի կեդրոնները զարգանան, նաեւ կազի հսկայ տարածութիւնները յառաջդիմութեան ենթարկուին: Յետոյ տնտեսական պատժամիջոցները արգելք հանդիսացան, որ նաֆթի եւ կազի արտադրութեան անհրաժեշտ գործիքները Իրան հասնին, ինչպէս նաեւ միջազգային նշանաւոր ընկերութիւններ իրանեան շուկայէն քաշուեցան, հակառակ որ ֆրանսացիները եւ անգլիացիները պահեցին իրենց կապերը իրանեան իշխանութեան հետ, եւ նաֆթի արհեստավարժներու խմբակներ պահեցին Տուպայի մէջ, որոնք շաբաթական աշխատանքային այցելութիւն կու տային Իրան:*

*2014-ին Իրան կ'արտադրէր շուրջ 2.2 միլիոն տակառ օրական: 1.2 միլիոնը կը սպառէր ներքին շուկային վրայ, իսկ մնացեալ մէկ միլիոնը կ'արտածէր յատկապէս Հնդկաստան եւ վերջերս Ռուսիա: Սակայն չմոռնանք որ 1978-ին Իրան կ'արտադրէր օրական 6 միլիոն տակառ: Ներկայիս կը նախատեսուի, որ Իրան արտադրէ 3 միլիոն տակառ օրական, կէսը յատկացուի ներքին սպառումին, միւս կէսը արտածումին: Այս պայմաններուն մէջ, վերլուծողները կը նախատեսեն որ նաֆթի գինը պիտի նուազի Իրանի արտադրութեան յաւելումին հետ, սակայն այս նախատեսութիւնը կրնայ չիրականանալ, որովհետեւ նաֆթի պահանջքը սկսած է բարձրանալ շուկայի վրայ, ինչպէս նաեւ ժայռերէն ստացուած նաֆթի արտադրութիւնը կը նուազի Ամերիկայի մէջ:*

*Տեղեկութիւնները համադրեց՝*
*ԶԱՒԷՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ*

## ԼԵԶՈՒՆ ՕՐԿԱՆԻԶՄԻ ՀԱՅԵԼԻՆ Է

*Լեզուն, բացի իր հիմնական եւ կարեւորագոյն պաշտօնէն, կը կատարէ նաեւ ամբողջ մարմնի հայելիի դեր. անով կարելի է որոշել ե՛ւ դիմադրողական համակարգի վիճակը, ե՛ւ շաքարախտը, ե՛ւ երիկամունքներու խնդիրները: Մաքուր լեզուն նաեւ առողջ մարսողական համակարգի նշան է: Բայց ամէն ինչ այդքան ալ դիւրին չէ: Լեզուն կրնայ ցոյց տալ բոլոր ներքին գործարաններուն վիճակը: Օրինակ, լեզուին ծայրը պատասխանատու է փոքր շրջանի գործարաններուն համար, լեզուին մէջտեղի մասը՝ լեարդի համար, աջ մասը՝ փայծաղի: Կողային հատուածները կը նկարագրեն թոքերուն վիճակը՝ աջ եւ ձախ հատուածները: Եւ այսպէս շարունակ:*

*Առողջական վիճակը կարելի է որոշել լեզուի գոյնէն, լորձաթաղանթի վիճակէն, լեզուի վրայի փառէն, նոյն փառի գոյնէն եւ լեզուի մակերեսի վիճակէն: Ընդհանրապէս, լեզուի վրայի փառը վատ դիմադրողական համակարգի եւ քրոնիկ հիւանդութիւններու նշան է: Եւ որքան խոր է փառը, այնքան լուրջ է հիւանդութիւնը:*

*Քրոնիկ ալքոլային թունաւորումէն լեզուն կը ծածկուի շագանակագոյն փառով՝ գրեթէ արմատային մասը:*

*Կապտաւուն լեզուն սրտանօթային անբաւարարութեան նշան է:*

*Լեզուի ամբողջ մակերեսի հարթութիւնը կը խօսի այն մասին, որ մարդը ունի ցած թթուայնութեան գաստրիտ: Իսկ բարձր թթուայնութեան պարագային՝ լեզուի բշտիկները կը կոպտանան:*

*Աշխարհագրական լեզուն, որը նման է քարտէզի, փոքրերու պարագային յատկապէս սննդային գերզգայնութեան նշան է: Լեզուի ծայրի կարմրութիւնն ու թոյլ ցաւը նշան է, որ կոնքային հատուածներու օրկաններու հիւանդութիւն ունի: Եթէ կը ցաւի լեզուին մէջտեղի հատուածը եւ երկու կողմերը, հնարաւոր է՝ թոքերու լուրջ հիւանդութիւն ունի: Լեզուի աջ հատուածի՝ վերէն վար կարմրութիւնը կը խօսի լեարդի բորբոքային հիւանդութիւններու մասին:*

*Նոյն փոփոխութիւնները ձախ կողմը՝ փայծաղի հիւանդութեան նշան են: Անհրաժեշտ է հետազօտել լեզուն եւ ստուգել բոլոր նշանները, որպէսզի կանխարգիլուին հիւանդութիւնները:*

## ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԸ ԽՈՉԸՆԴՈՏԵՆ ՆԻՀԱՐՆԱԼՈՒՆ

*Սննդագէտներու եւ հոգեբաններու հետազօտութիւններուն համաձայն՝ ամէնեւին ալ պէտք չէ յատուկ սննդակարգով տանջուիլ, կանոնաւոր կերպով բեռնաթափման օրեր կազմակերպել եւ մանրակրկիտ ձեւով հաշուել ջերմուժը:*

*Ազատելով աւելորդ կշիռքի պատճառ հանդիսացող վնասակար սովորութիւններէն, կարելի է մէկընդմիշտ ազատիլ աւելորդ քիլոներէն:*

*Նիհարնալուն խոչընդոտող սովորութիւններ՝*

*1. Առանց անօթի զգալու ուտելը: Առանց պատճառի, ընկերակցութիւն կազմելու համար, կամ ձանձրոյթէ մղուած ուտելը, կարծես թէ անով կարելի է լուծել որեւէ խնդիր:*

*2. Իւղոտ եւ յագեցնող սնունդով լեցուն ճաշարաններ յաճախակի այցելութիւնները:*

*3. Տուփեղէններու օգտագործումը: Իրականութեան մէջ,*

*տնային պայմաններու մէջ՝ մեր ձեռքով պատրաստուած ուտելիքները աւելի համեղ են եւ քիչ վնասակար, յատկապէս, եթէ կը պարունակեն քիչ ջերմուժ:*

*4. Ուտելու ժամանակ պատկերասփիւռ դիտելը: Այդ ժամանակ տեղի կ'ունենայ վերահսկողութենէ դուրս, խելայեղ մեծ քանակով ուտելիքի օգտագործում: Շարժումներու սահմանափակումն ու աւելորդ ջերմուժի աճ՝ առանց պատկերասփիւռէն կտրուելու:*

*5. Քունի մշտական պակասը: Համակարգիչի դիմաց նստիլն ու համացանցով հաղորդումներ դիտելը՝ առողջ եւ լիարժէք քուն ունենալու փոխարէն:*

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*Հնչակեան 20 կախաղաններու 100-ամեակին չքեղ հանդիսութեան առթիւ «Մասիս»ի ֆոնտին կը նուիրեն՝*

*Մի ոմն $100 տոլար*

*Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Լուսին Գալուստեան 100*

## ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐԵՐ

*Օգոստոս 8, 2015*

*«Փոքեր Նայթ» կազմակերպութեամբ Հ.Մ.Մ.ի Տիկնանց Վարչութեան*

******

*Սեպտեմբեր 12, 2015*

*«Արաբական Գիշեր» ընթրիք, կազմակերպութեամբ Հ.Մ.Մ.ի Տիկնանց Վարչութեան:*

******

*Սեպտեմբեր 20, 2015*

*Հայաստանի Անկախութեան 24րդ տարեդարձի փառատօն-դաշտահանդէս, Կլէնտէյլի Վերտուկօ զբօսայգի, կազմակերպութեամբ Նոր Սերունդ Մշակութային Միութեան:*

## Save the Date

NOV. 7, 2015-Saturday, St. Peter Church Ladies Society 57th Annual Fashion Show and Luncheon, One Hundred Years and Flourishing, at Four Seasons, Westlake Village, CA

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*Հանգուցեալ Տիար Յովհաննէս Մկրեանի մահուան տխուր առիթով, Կիլիկեան Կրթական Միութեան Կեդրոնական Վարչութիւնը, կու գայ յանուն բոլոր Կիլիկեանցիներուն, իր խորազգաց ցաւակցութիւնները յայտնելու հանգուցեալի այրիին՝ տիկ. Շողիկին, Տէր եւ Տիկ. Բաբգէն եւ Անահիտ Մկրեաններուն, Տիկ. Ռոզալին Մկրեանին, զաւակներուն, հարազատներուն եւ համայն բարեկամներուն ու կիլիկեանցիներուն:*

*Յովհաննէս Մկրեան շրջանաւարտ եղած է Հալէպի Կիլիկեան վարժարանէն 1943ին, ապա իր ուսումը շարունակած է Հալէպի Ամերիկեան Գոլէճի մէջ, ուրկէ շրջանաւարտ եղած է 1947ին Պատուոյ յիշատակութեամբ: Հեռակայ կարգով հետեւած է Լոնտոնի գոլէճի Ելեքտրա-Մեքենագիտական մասնագիտութեան:*

*Գործի ասպարէզ մուտք կը գործէ իր եղբօր Զաւէնի հետ, հիմնելով ինքնաշարժի մասերուն եւ ելեքտրական կազմածներու հաստատութիւն մը որ յետագային կը հանդիսանայ քաղաքի խոշորագոյն կեդրոններէն մին:*

*Յովհաննէս Մկրեան եղած է նուիրեալ Ազգային հասարակական գործիչ մը եւ խոնարհ բարերար մը: Հալէպի մէջ ան երկար տարիներ վարած է Հ.Մ.Մ.ի վարչութեան ատենապետի պաշտօնը, այդ շրջանին Հ.Մ.Մ.ի մարզական աշխուժութիւնը կրկնապատկուած է, 1959ին իր ջանքերով Սուրիա հրաւիրուած է հայրենի «Սպարտակ-Արարատ» ֆութպոլի խումբը:*

*Ան աշխատած է նաեւ Քիլիսի Հայրենակցական Միութեան վարչութեան մէջ: Եղած է գրասէր եւ մշակութասէր անձ մը եւ գաղութին մէջ փնտռուած ասմունքող մը:*

*1965ին կը փոխադրուի Պէյրութ, ապա 1978ին Լիբանանի քաղաքացիական կռիւներու պատճառաւ, ընտանեօք կը փոխադրուին Միացեալ Նահանգներու Ֆիլատելֆիա քաղաքը, ուր շարունակելով իր ծառայողական աշխատանքները, երկար տարիներ կը ստանձնէ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետի պաշտօնը:*

*Յովհաննէս Մկրեանի հասարակական գործունէութեանց մէջ միշտ առաջնահերթ էր օժանդակել իր նախակրթութեան օճախին, Հալէպի Կիլիկեան վարժարանին: Ան մինչեւ իր մահը, Կեդրոնական վարչութեանս Արեւելեան Ամերիկայի պատասխանատուներէն մին էր: Արժանացած էր Կիլիկեան կրթական Միութեան պատուոյ յուշատախտակին:*

*Թող Աստուած անոր հոգին երկնային Արքայութեան լոյսերուն մէջ հանգստացնէ:*

*Կիլիկեան Կրթական Միութեան Կեդրոնական Վարչութիւն*
*Լոս Անճելոս*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՊՕՂՈՍ ՂԱԶԱՐԵԱՆ եւ ԽՈՐԷՆ ՂԱԶԱՐԵԱՆ եղբայրներու մահուան տխուր առթիւ (մահացած Լիբանան) Ս.Դ.Հ.Կ. «Արսէն Կիտուր» մասնաճիւղի վարչութիւնը իր վշտակցութիւնը կը յայտնէ զոյգ հանգուցեալ եղբայրներու ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. ընկ. Ոսկեբերան Ղազարեանին:*

## ՆԱԶԻԿ ԱՐՄԵՆԱԿԵԱՆԻ «ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐ»

*Շարունակուած էջ 13-էն*

*Վիգէն Գալստեանը:*

*Ընտրութիւն են կատարել հազարաւոր լուսանկարներից: «Խնդիր կար այդ ամէնը զտելու եւ 40 լուսանկարից բաղկացած գիրք դարձնելու: Երկար մտորում էինք, թէ որ լուսանկարները ընտրուեն, ինչ գաղափարախօսութիւն, ինչ տրամաբանութիւն ունենան: Գիրքը բացւում է մահուան տեսարանով, դագաղում պառկած Աշխէնն է: Ինձ համար, որպէս գրքի խմբագրի, կարեւոր էր ստեղծել ֆոտոգիրք, ոչ թէ գիրք, որն ուղղակի պարունակում է լուսանկարներ»,- նշել է արուեստաբանը:*

*Նրա դիտարկմամբ՝ գիրքը, որպէս ամբողջութիւն, շատ է տարբերւում ուղղակի ցուցահանդէսից, այս ֆոտոգրքում լուսանկարն ու տեքստը հետաքրքիր ձեւով են յարաբերւում: «Այս դէպքում կային վկայութիւններ, որոնք անհրաժեշտ էր ընդգրկել, կար Մարկ Նշանեանի նախաբանը, որը, կարծում եմ, հայերէնով լուսանկարչութեան մասին գրուած ամենակարեւոր տեքստերից մէկն է: Այն կոչւում է «Պատկերը որպէս նշխարհք», եւ նա շատ հետաքրքիր ձեւով է ներկայացնում այդ լուսանկարների արժէքը, վերապրածների փորձառութիւնը ըմբռնելու գործը: Այս գրքում տեքստն ու լուսանկարը հաւասար կշիռ ունեն»,- նկատել է նա:*

*«Վերապրածներ» ֆոտոգիրքը լուսանկարիչ Նազիկ Արմենակեանի երկրորդ գիրքն է «Մենակութեան շտամպ»ից յետոյ: 1000 տպաքանակ ունեցող գիրքը բաժանուելու է վերապրածների ընտանիքներին, գրքի ստեղծման մէջ ներդրում ունեցող անձանց, բայց մի մասն էլ վաճառուելու է: Անգլերէն տարբերակը կը ներկայացուի լուսանկարների ամենամեայ միջազգային փառատօնին, բացի այդ՝ արտասահմանեան գրախանութներին կը տրամադրուի:*

*Գրքի ստեղծումը հնարաւոր է դարձել Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող յանձնաժողովի եւ հովանաւոր Աշոտ Խաչատուրեանցի շնորհիւ:*

SYRIAN ARMENIAN RELIEF FUND
Save
Support
Sustain
Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948
www.syrianarmenianrelieffund.org

## ՄԻ ՊԱՅԾԱՌ, ԱՆՄՈՌԱՑ ԱՆՈՒՆ

*Շարունակուած էջ 16-էն*

*ազատուեց զբաղեցրած պաշտօնից, ինչպէս ընդունուած է՝ այլ աշխատանքի անցնելու ձեւակերպմամբ:*

*Իւրաքանչիւր տարի, Ապրիլի 24-ին, միլիոնաւոր հայեր են այցելում ցեղասպանութեան զոհերի յուշարձան: Ինչքան արդար կը լինի, որ ծառուղիներից մէկում տեղադրուի հայ ժողովրդի արժանաւոր զաւակի արձանը, մեր ազգային ինքնութեան ամրագրման ջատագովի արձանը: Այս տարի նա կը դառնար 107 տարեկան: Այս փաստն անգամ յուշում է, որ արձանի տեղադրումը անհրաժեշտութիւն է:*

*Անհնար է չյիշեցնել, որ 1965թ. Ապրիլի 24-ի հանդիսաւոր նիստի ժամանակ դաւադիրների կազմակերպած հրմշտոցը, ապակիների փշրումը, չկարողացան ազդել ընդհանուր իրավիճակի վրայ եւ շուրջ 40-50 մեկուսացուածները մեծ հայորդու հրամանով ազատ արձակուեցին, ոչ մէկի նկատմամբ քրէական գործ չյարուցուեց: Ամէն ինչ պարզ էր ու հասկանալի: Զարոբեանին վարկաբեկելու համար նրա ապազգայ «ընդդիմախօսների» ձեռքի գործն էր դա:*

*Մահից առաջ, վերապրելով իր դժուարին կեանքի պահերը, մեծ նուիրեալը յայտնում է իր երազանքը՝ «Կ'ուզեմ հանգչել Ծիծեռնակաբերդի կոթողի ստորոտում, միշտ մնալ ցեղասպանութեան զոհերի յուշարձան կոթողի մօտ: Դա իմ կեանքի ամենամեծ գործն է...»:*

***

*Յ.Գ.- Յօդուածագիրը օգտուել է Հ. Միրզոյեանի «Հայաստանի խորհրդային տիրակալները», Ռ. Առուշանեանի «Յակով Զարոբեանը իմ յուշերում» «ՀԿԿ պատմութեան ուրուագծեր» գրքից եւ ՀՀ Ազգային արխիւի ՀՔԿՓՊԱՖ.1., ց.123, գ. 4789 նիւթերից:*

*«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ*

## ԱՆԳԱՄ ՄԸ ՈՐ ՇՓՈԹԵՍ ԾՆՈՂՔԴ...

*Շարունակուած էջ 15-էն*

*ձեռք բերի: Եւ շաբաթ մը անց հիասթափութեամբ համոզուեցայ որ այս աղբիւրն ալ ապարդիւն է: Այդ նոյն շրջանին կը թղթատէի նաեւ Անգլիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան արխիւը: Հանդիպեցայ նախկին դեսպան Պիլալ Շիմշիրի չորս հատորանի «Անգլիական փաստաթուղթերու մէջ Աթաթիւրք» անուն ուսումնասիրութեան: Բայց հոն ալ ամենահին թուարկութիւնը 28 Փետրուար 1919 էր: Այսինքն Մուսթաֆա Քէմալի տան մէջ հայ որբ փնտռուելու թուականին, 10-11 Դեկտեմբեր 1918 թուականին մասին ոչ մէկ վկայութիւն:*

*Այս ուսումնասիրութիւնները ալ աւելի պղտորեցին գիտելիքներս: Տէր Ներսէս Պապայեան «Օրագրէս էջեր» խորագրեալ յուշերուն մէջ Սեպիլճեան ընտանիքին ալ մաս կազմած կարաւանին Այնթապ վերադարձը կը նշէ 21 Նոյեմբեր 1919 թուականով: Մայրը հագիւ այն ժամանակ սորված ըլլալու է Խաթունի բացակայութիւնը: Ուրեմն Դեկտեմբեր 1918ին Մուսթաֆա Քէմալի տան մէջ փնտռուածը Խաթուն չի կրնար ըլլալ: Դատաւոր Մատթէոս Էվլիկատեանի յուշերուն մէջ ալ կը խօսուի Մուսթաֆա Քէմալի մօր Զիւպէյտէյի եւ Պատրիարք Զաւէն Տէր Եղիայեանի միջեւ տարակարծութիւնը: Զիւպէյտէ հայ որբ մը որդեգրած էր եւ կը մերժէր Պատրիարքին վերադարձնել: Բայց այդ որբն ալ մանչ մըն էր՝ Ապտուլրրահիմ Թունճաք:*

*Կը յիշէք յօդուածագիր Մուսթաֆա Էքմէքճին: Խիզախ ու քաջարի լրագրող մըն էր: Իւրայատուկ ոճ մը որդեգրած էր, որու շնորհիւ կը գրէր ուրիշներուն չհամարձակած նիւթերու մասին: Շատ անգամ կը դիմէր՝ իբրեւ թէ, կ'ըսեն թէ, ես ուրկէ գիտնամ նման մէջբերումներու, բամբասանքի կը վերածէր խիստ լուրջ պնդումները: «Ենի Օրթամ» կամ «Ճումհուրիյէթ» թերթերու ընթերցողները, սակայն կը գիտակցէին որ այդ բամբասանքի տեսքով մը ներկայացուածները հաւաստի լրատուութիւններ են: Զինք յիշելուս դրդապատճառը Անգարա կայացած ցուցահանդէս մըն է: Աթաթիւրքի հոգեզաւակ Ապտուլրրահիմ Թունճաք իր մօտ գտնուած Աթաթիւրքի լուսանկարները նուիրած է հաստատութեան մը: Ցուցահանդէսի բացման հանդիսութեան ներկայ է նաեւ Սապիհա Կէօքչէն: Այդ երեկոյ հետեւեալ զրոյցը կ'անցնի այս երկուքի միջեւ: «Սապիհա, դուն զիս կը ճանչնաս, ես ալ քեզ լաւ կը ճանչնամ»,- կ'ըսէ Ապտուլրրահիմ: «Անշուշտ կը ճանչնամ, շատ լաւ կը ճանչնամ», - կը պատասխանէ Սապիհա: Էքմէքճի այս յօդուածը կ'աւարտէ «Կը կարծեմ թէ յառաջիկային շահեկան գիտելիքներ պիտի փոխանցեմ Ապտուլրրահիմի մասին» նախադասութիւնով:*

*Էքմէքճի վեց ամիս անց մահացաւ առանց այս մասին գրելու: Բայց եթէ գրած ըլլար, հաւանաբար պիտի հրապարակէր այն իրողութիւնը, թէ Ապտուլրրահիմ ոչ թէ հոգեզաւակ այլ հարազատ որդին է Մուսթաֆա Քեմալին:*

*Հակասական տեղեկութիւններու հսկայ ծրարի մը տպաւորութիւնը կը թողու Մուսթաֆա Քէմալի որդեգրած հոգեզաւակներուն տոհմածառը: Նոյնինքն այդ հոգեզաւակները, ներառեալ Սապիհա Կէօքչէն, ընդմիշտ սուտ ու սխալ տեղեկութիւններ փոխանցած են իրենց ծնողներուն մասին: Ուշագրաւ է, որ այս առումով ներկայացած ամէն պատմութիւն ձեւով մը կը ջրէ նախորդը: Ոչ թուականները, ոչ անձնանունները եւ ոչ ալ տեղանունները կը համապատասխանեն:*

*Սապիհա Կէօքչէն ընդմիշտ հպարտութեան աղբիւր մը եղաւ տէրսիմցիները ռմբակոծելու, զանգուածաբար կոտորելու իր »հերոսութեան« պատճառաւ: Այժմ այդ պատիւին վրայ եկած է աւելնալու կեղծուած ինքնութեան հետեւանքով Հրանդ Տինքի մահուան տանող ճանապարհին ալ իր անունէն մեկնած ըլլալու փաստը:*

## ԲԱՂՐԱՄԵԱՆ ՊՈՂՈՏԱՅ

*Շարունակուածէջ 17-էն*

*տարուեստին տիրապետելու հանգամանքը հաշուի առնելով, ժամկէտային ծառայողների մէջից որպէս բացառութիւն, ընդգրկել էին հետախոյզների խմբում: Մասնակից էր մի շարք յատուկ առաջադրանքների կատարմանն, որոնցից ամենափայլունը՝ հակառակորդի զօրամասի հրամանատարին գերեւարելն էր:*

*- Լաւ չէ ընկածին ծեծելը: Ուժասպառ միտինգաւորի վրայ կռացած երկու քաղաքացիականներն ալարկոտ բարձրացրին գլուխները, զարմացած հայեացքով նայեցին միմեանց, յետոյ իրենց դիտողութիւն անող ուսանողին, ուղղուեցին ու սպառնալից մօտեցան նրան: Վերջինս գնահատեց իրավիճակը, մէջքով շրջուեց մօտեցողների նկատմամբ ու հեռանալու կեղծ քայլ կատարեց, ապա կատարեց անսպասելի ցատկ պտոյտով: Հետեւեց ընթացքային ոտքով հարուածը: Մօտեցողներից մէկը տապալուեց գետնին, իսկ գետնին իր իջնելու պահին հասցրեց միւսի դէմքին մօտիկից արմունկով հարուած հասցնել: Կռացաւ, ընկած միտինգաւորին խորհուրդ տուեց արագ շարժուել դէպի մօտակայ մայթը, թաքնուել շէնքի բակային մասում: Արագ տեղաշարժուեց. - մի տեղում մնալը իր վրայ ուժերի կենտրոնացում էր բերելու: Երկու հոգու էլ ագատեց:*

*Մէկ էլ...*

*Այս ի՞նչ է անում:*

*Ոստիկանական համազգեստաւորը բռնել էր գետնին տապալուած, ամբողջովին թրջուած աղջկայ մազերից ու քարշ էր տալիս դէպի յատուկ մեքենան,*

*- Թալանին դէմ ե՞ս, հա՞, ես քո... Զհասցրեց աւարտի, խօսքը բերանում կիսատ մնաց: Ուսանողի արեւելեան մարզաձեւի հնարք հարուածից ոստիկանը գլորուեց ասֆալտի վրայ մի քանի պտոյտ կատարելով: Գետնից բարձրացրեց աղջկան ու ցայտաղբիւրի մօտ ստացած ջերմութիւնը կրկին պարուրեց նրան:*

*- Դո՞ւ. - ասին երկուսն էլ միաժամանակ: - Ժամանակ չունենք, վազում ես դէպի մօտակայ մայթը, կը մտնես այն սեփական տներից մէկի բակային մասը, կասես որ քեզ տանեն Բաղրամեան պողոտայ, թիւ ««...»», այնտեղ ապահով է, մնացածը յետոյ: Ես հիմա սրանց ուշադրութիւնը կը շեղեմ:*

*- Բերետաւորներ, եկէք ձեր մարգավիճակը ստուգեմ. - մարտական դիրք ընդունելով ձայնեց համազգեստաւորներին: Սրանք խմբուեցին ու կիսալուսնաձեւ շարքով եկան դէպի ուսանողը: Ուսանողը դանդաղ յետ գնաց դէպի մայթը: Այն հատուածում, որին մօտենում էր նա քայլ-քայլ, տեղի շէնքաբնակներն էին լրագրողների հետ հաւաքուած, իսկ նրանց յետեւում նեղլիկ նրբանցքն էր բազմաթիւ ճիւղաւորումներով: Մինչեւ շրջուելը ձայն տուեց մայթում հաւաքուածներին.*

*- Ճանապարհ տուէք: Շրջուեց, արագ վազք ու անհետացաւ նրբանցքում: Բարձրայարկի տանիքից Բաղրամեան պողոտան երեւում էր ինչպէս ձեռքի ափի մէջ: Միտինգաւորներով բեռնուած ոստիկանական մեքենաները հեռացան, իրենց հետ տանելով ինքնաբուխ ծագած արեւը: Ցարաբերական անդորրը խաբուսիկ էր.*

*-Հիմա երկու հակառակորդ կողմերը փորձելու են վերաիմաստաւորել կատարուածը: Ի՞նչ խորհուրդ կը տար հայրն այս իրավիճակում.*

*- Հաստատ ամէն ինչ, բացի թաքնուելուն: Իջաւ բարձրայարկից, գնաց, կանգնեց բարիկադների վրայ: Մենակ մարդն ոչ ոքի պէտք չէ.*

*- Թող իրեն էլ ձերբակալեն:*

*- Սթափուէ՛ք, սթափուէ՛ք.*

*- սպայի համազգեստով գռուգռւացող ոստիկանը կատաղութիւնից կարմրել էր: Ուսանողն երկար նայեց սպայի ծանօթ թուացող դէմքին, չկարողացաւ յիշել: Ուղեղն էր մթագնել կատարուած դէպքերից, թէ իջնող արցունքներն էին վարագուրել հայեացքը:*

*- Սթափուէ՛ք, - ոստիկանը չէր կարողանում հանդարտուել.*

*- ես ոստիկանապետն եմ: - Ես էլ Ուսանողն եմ, ինչու՞ էք ուշացնում, ինձ էլ ձերբակալէք: Ձերբակալման սպասումով շրջուեց դէպի Ֆրանսիայի հրապարակ:*

*Այնտեղից դէպի բարիկադներ Բաղրամեան փողոցը լայնութեամբ լցուած հոծ բազմութիւն էր գալիս:*

## ՅԱՒԵՐԺԱԿԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐ

*Շարունակուածէջ 7-էն*

*ւոր սննդի պէս բան է դարձել, եւ որեւէ Մինսկի խումբ ի վիճակի չէ մեր յաւերժական թշնամութեան դէմն առնել: Առանձնապէս շատ չեն էլ ցանկանում: Իրենց համար յարմար աշխատանք են գտել՝ զբաղւում են: Ինչքան երկար մեր թշնամութիւնը շարունակուի, էնքան իրենք աշխատանք ու զբաղմունք կ'ունենան: Փաստօրէն, մենք մեր յաւերժական թշնամութեամբ Մինսկի խմբի անդամներին յաւերժական աշխատանքով ենք ապահովում: Ուրիշ շատ «խաղաղասէրներ» էլ կան, որոնց զբաղուածութիւնն ապահովում ենք՝ մեր յաւերժական թշնամութիւնը մեզ համար նոյնպէս զբաղմունք դարձնելով:*

*Հենց այսպէս էլ ապրում ենք: Եւ ով աւելի է ատրպէյճանցիներին ատում, նա աւելի լաւ հայ է համարւում: Եւ ով աւելի է ատրպէյճանցիներին ատում, նա աւելի լաւ է ապրում: Այսինքն՝ մեր յաւերժական թշնամու գոյութիւնն ապահովելու հարցում աւելի քան շահագրգռուած ենք:*

*Բայց մեր թշնամութիւնը չպիտի ատրպէյճանցիների վրայ սպառենք: Որովհետեւ թուրքերն ու Թուրքիան էլ կան, եւ չնայեած մենք ատրպէյճանցիներին էլ ենք թուրք անուանում, այնուամենայնիւ, դրանք տարբեր են: Այլապէս կ'ունենայինք ընդամէնը մէկ յաւերժական թշնամի, այլ ոչ թէ երկու: Եւ դրանից մեր գործունէութիւնն ու ինքնագործունէութիւնը զգալիօրէն կը նուազէին: Ինչպէս նաեւ՝ մեր հայրենասիրութիւնը զգալիօրէն կը նուազէր: Որովհետեւ մեզանում հայրենասէրի համարում ունեն առաջին հերթին նրանք, ովքեր առաւել սրբօրէն են պահում ու պահպանում մեր յաւերժական թշնամեաց հանդէպ մեր յաւերժական թշնամութիւնը:*


Գրաւուած Թուական

Mark Your Calendars

Հայաստանի Անկախութեան Օրուայ ՓԱՌԱՏՕՆ

Սեպտեմբեր 20, 2015




Armenian Independence Day FESTIVAL

**To reserve your booth**
**please call Nor Serount Cultural Association**
Ձեր կրպակները ապահովելու համար
Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան
**(818) 391-7938**